

ԿՈԼԻՈԶՆԻԿԻ  
ԴՐԱԴՐԱՆ

ԿԱԼԵԽ, ԳՐՈՒԳՆԵՎ,  
ԹՈԼԴԻՐՅԵՎ, ԿՈՒՁԵՑՈՎ,  
յև Ա.ՍՅՈՒԽՈՎ.

ԶԱՐԳԱՑՐԵՔ  
ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ  
ԿՈԼԻՈԶՆԵՐՈՒՄ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱ-  
ՏԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՍԽԱՎՅԻՆ ԿՈՎԿԱՄ  
ՅԵՐԿՐԱՅԻՆ ԲԱԺԱՄՈՒՆՔ


636(47.9)  
9-35

636(47.91)  
9-35

24 SEP 2010

ETOS YAM 18

„ՄՈՒՐԱ-ՄՈՒԳԱՎԱՀ“-Ի ԴՐԵԴՐՈՒԹՅՈՒՆ № 21



Զ Ա Ր Գ Ա Ց Ր Ե Փ  
ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵ  
ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Развивайте животноводство  
в колхозах.

на армянском языке

ԹԱՐԳԱ. Պ. Մ. ՁԵՎ. Հ. Պ.



ԱԶԳԱՅԻՆ ՓՈՄՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՄԱՎԱՅԻՆ ԿՈՎ-  
ԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

БИБ 932 82

21.679

31 MAY 2013

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կուսակցության դեկավարությամբ մենք մեր յերկրում կառուցում ենք սոցիալիզմ։ Ծափալուն ֆրոնտով վճռական հարձակում ենք դործում դյուղի և քաղաքի կապիտալիզմի մնացորդների վրա։ Ինգուստրացման ենք յենթարկում մեր յերկիրը, կառուցում ենք հսկա գործարաններ և ֆաբրիկաներ, ելեկարուկայաններ, նոր յերկաթուղային ձանապարհներ և այլն։ Մարդկության պատմության ընթացքում, միլիոնավոր աշխատավորությունն առաջին անգամ իրեն զգալով տիրոջ դերում, բացարիկ հոգատար վերաբերմունք և հայտնաբերում դեպի արդյունաբերությունը։ Բարձրացան գիտակից կոմունիստական աշխատանքի—սոցիալիստական մրցակցության հսկա ալիքներ։ Հարվածային միջուկներից, բրիգազներից, ցեխերից անցնում ենք հարվածային գործարանների։ Սրդյունաբերության մեջ արդեն վերջին մահարեր հարված և հասցում բուրժուական ավանդություններին, փարքին։

Մեր սոցիալիստական արդյունաբերությունը, վերջացնելով իմպերիալիստական և քաղաքացիական կորչերի հասցրած ավերումների վերականգնման ըրջանը, չտեսնված արագ քայլերով առաջ և գնում և ննդամյակի վերջում (1932 թ.) այնպիսի հաղթություններ կունենած գործոց մասին մի քանի տարի առաջ յերազելն անգամ դժվար եր։ Հնդամյակի վերջում վոչ միայն զգալի չափով կազմակերպ կապիտալիստական արտասահմանից տեխնիկա-տնտեսական կոխում ունենալուց, այլ մի քանի տե-



Կ 33 89-63

Газетно-книжная типография Севкавполиграфтреста. Ростов на Дону.  
Крайлит № 09-125  
заказ № 5676  
тираж 2000

սակներում (գյուղատնտեսական մեքենաների շինարարություն) նույնիսկ Ամերիկայից ել կանցնենք:

Բուրժուական արտասահմանին, հասնել և անցնել՝ լենինյան լոգունգը գործնական նշանակություն ե ստանում, լենինյան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ դա կատարվում ե և ամբողջովին կկատարվի:

Ինդուստրացման ֆրոնտում վճռական հաղթություն ձեռք բերելով, ամրացնելով սոցիալիստական արդյունաբերության դերը, կուսակցությունը և բանվոր դասակարգը կոչ արին մեր յերկրի աշխատավոր գյուղացիությանը, գյուղական տնտեսությունը սոցիալիստական ձեերով վերակառուցելու համար: Գյուղի բատրակությունն ու չքավորությունը վազուց ըմբռնել ե, փոր կուշակի շահագործումից ու նրանից կախում ունենալուց պատճենու միակ ուղին՝ դա կուսակցության և բանվոր դասակարգի ցույց տված՝ անհատական մանր տնտեսությունից դեպի կոլեկտիվ տնտեսության փոխանցելն ե: Բայց վորպեսզի գյուղատնտեսության կոլեկտիվացման դաշտարրը, նրա անհրաժեշտությունը և ոգտագետությունն ամբողջ գյուղացիության, նրա հիմնական մասսաներին-միջակներին հասկանալի դառնար, ահազին աշխատանք ու ժամանակ պահանջվեց, Այսոր միջակ գյուղացիությունը մասսայական կարգով կոլխոզ և գնում, խոշոր կոլեկտիվ միավորումներ և կազմակերպում: Այսոր կարելի յետ ասել, փոր բանվոր դասակարգը և գյուղացիությունը ամբողջ ֆրոնտով վճռական հարձակում են կատարում կապիտալիստական մնացորդների վրա, արմատախիլեն անումնբանց վերջին արմատները:

Այսոր արդեն մենք անցանք կուլտին, վորպես դասակարգ, վենչացնելու գործին:

Ամբողջ Խորհրդային Միության միջինավոր աշխատավոր գյուղացիությունն, արդեն գործնականորեն հարց և գնում իր տնտեսության արմատական սոցիալիստական վերափոխման, հողի անհատական ոգտագործումից խոշոր կոլեկտիվ տնտեսությունների և կոմունաների անցնելու մասին:

Հյուսիսային Կօվկասին վիճակված ե պատմական խրնիքից լինել առաջինը, լինել համատարած կոլեկտիվացման նաև ապարհը հարթողը:

Յեկ այժմ կոլխոզ մտնելու համար պետք ե վոչ թե ազիտացիա, այլ պետք ե գյուղատնտեսությունը գործնականորեն վերակառուցել, կարգավորել գյուղատնտեսության արտադրությունը, վերադաստիարակել մարդկանց և դարձնել նրանց սոցիալիստական շինարարության գիտակից ստեղծողներ և մասնակիցներ:

Վերեսում մենք ասացինք, վոր մեր արդյունաբերությունը վերջացրեց իր վերականգնումը, հսկայական քայլերով այժմ առաջ ե շարժվում, մեզ անհրաժեշտ ե վերջնականապես ազատվել կապիտալիստական արտասահմանից կախում ունենալուց և անպայման, հասնել ու անցնել տեխնիկա-տնտեսական ասպարիգում:

Այս բոլորին կհասնենք այն ժամանակ, յերբ մեր գյուղատնտեսությունը արդյունաբերության հետ վոաք վոաքի ընթանա, վոր նա լրիվ չափով արդյունաբերությանը տա հումուցիթ և պրոլետարական կենտրոններին՝ մթերքներ: Թեկուզ գյուղատնտեսությունը հասել ե մինչչպատերազմյան մակարդակին և մի քանի ճյուղերում նույնիսկ առաջ ե անցել, այնուամենայնիվ նա շարունակում է գեռ յետ մնալ վորակի տեսակետից: Պատճառը կայանում ե նրանում, վոր գյուղատնտեսական արտադրությունը ցիր ու ցան եր յեղած, տարվում եր անհատական ձևով, վոր գյուղաննտեսական մթերքների խոշոր մեծամասնությունը գնում եր հենց գյուղի բնակչության գործածման վրա: Մի խոռոշով, մեր գյուղատնտեսությունը արդյունաբերության աճումից յետ եր մնում:

Ներկայումս, յերբ մենք անցանք սոցիալիստական շինարարության նոր շրջանին, յերբ գյուղացիությունն անցնում է տնտեսության նոր ձևերին, պետք ե գնուականորեն վերացնել այն բացը, վոր կա արդյունաբերության և գյուղատնտեսության աճման տեմպերում:

Կուսակցությունը և կառավարությունը վերջին յերկու տարիներում ուժեղ կերպով զբաղված ենին հացի դժվարությունների խնդրի լուծումով և պետք ե հաշվել, վոր այս գործում մենք հիմնականում ձեռք բերինք վճռական հաջողություններ: Թեկուզ հացի դժվարությունները ամբողջապես չեն վերացված, սակայն հավատացած կարող ենք ասել, վոր ընդգրկված

Են բոլոր նախադրյալները, վորպեսզի մեր յերկիրը առաջիկա 1-2 տարիներում վոչ միայն հացի կարիք չունենա (ներքին սպասողության համար), այլ և անդամ հնարավոր լինի հարյուրավոր միլիոն փութ հացահատիկ արտահանել արտասահման: Մեր հացի փոխարեն ստացված միջոցները կենդանարար բուռն հոսանքով կթափվեն ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման (նորից վերափոխելու) գործի մեջ:

Դյուղատնտեսության կողեկտիվացման հետ միասին ծագում ու որվա կարեորագույն հարց և հանդիսանում հենց մոռակատարիներում—անասնապահության խնդրի լուծումը:

Կուսակցության կենտրոնական կոմիտեի նոյեմբերյան պլենումը, տնտեսական շինարարության հերթական խնդիրների մասին իր վորոշումներում առանձին ուշադրություն դարձեց յերկրի պահանջի և հացահատիկային ու անասնապահական արնետեսության աճումների մեջ գոյություն ունեցող ճեղքվածքի վոչնչացման հարցին:

„Կուսակցության Տնտեսական խաղաքականության կարելագագույն խնդիրներից մեկն և ինչպես յեվ առաջ գյուղատնտեսության յեվ մասնավորապես նրա հացահատիկային յեվ անասնապահական զարգացման չափազանց յետամեաց տեսպերին հաղթահարելը“ (1929-30 թ. ժողովրդական տնտեսության ստուգիչ թվերի մասին ընդունված բանաձեկց):

Բաց թշնամիները համաշխարհային հականեղավոխական բանակից, վախկոտներն ու թերահավատները մեր սեփական շարքերից, աչ թեքումնավորները գուշակում եյին կուսակցության և բանվոր դասակարգի կործանումն և մեր ճանապարհի վրայեղած դժվարությունները հաղթահարելու անկարելիությանը:

Բաց թշնամիները և թերահավատները պնդում եյին, վորդյուղանտեսությունը քայլայվում է, վորնա չի հասել նույնիսկ մինչպատերազմյան չափերին և դրա համար գյուղատնտեսությունը վոչ միայն չի կարելի սոցիալիստական կորեկտիվ վրա դնել, այլև անհրաժեշտ է կուլակին գյուղում ապէ,

կուսակցությունը չվախեցավ թշնամիներից, չուց վախկոտներին և թերահավատներին և ուղիներ ե ընդգրկում, վորոնցով մենք պետք ե գուրս գանք և արդեն գուրս ենք դալիս սոցիալիզմի լայն ճանապարհը:

Ինչպես հացահատիկային, նույնպես և անասնապահական մեր տնտեսությունը հավասարվեց և առաջ անցավ մինչպատերազմյան մակարդակից, բայց վորակը դեռ շատ հեռու յեւ բավարար լինելուց:

Մարտականորեն, հեղափոխականորեն լուծել, վերածնվող արդյունաբերությունը լրիվ չափով հում նյութով և պրոլետարական բնակչության ու գյուղացիության պահանջները բավարարելու խնդիրը: Յեվ այդ խնդիրը մենք կարող ենք լուծել միայն,, մսի արդյունաբերության պետական խոշոր խորհրդաբն տնտեսություններ կազմակերպելու, անասնապահության զարգացման ասպարիզում՝ արտասահմանայն տեխնիկայի նորագույն տվյալների համաձայն կոլխոզներում ապրանքային անասնապահության արտագրությունը զարգացնելու՝ միջոցով:

Միայն խոշոր տնտեսությունների, խորհրդային և կոլեկտիվ գյուղատնտեսությունների շինարարության միջոցով հնարավոր կիմի կարճ ժամանակամիջոցում ամելի լուրջ կերպով գնել և լուծել կերի պրոբեման, անցնել ցեղի ստեղծման ու լավացման, ավելացնել անասունների ընդհանուր քանակը և բարձրացնել նրանց վորակը:

Անասնապահության վերակառուցման ասպարիզում մինչև այժմ անցկացվող առանձին կտրատված միջոցառությունները ալժմ է մի յեն ձուլվում և փոխարինվում կարգավորված ծրագրով, վորը որգանապես կապում է նախիրի. ավելացման աշխատանքների բոլոր ասպարիզները՝ ապրանքայնություն, վորակի բարձրացում, անասունի վերամշակում, մատակարարում և այլն: Անասնապահության պրոբեման վերաբերյալ կուսակցության կենտրոնական կամիույնի վորոշումը վոչ պակաս դեր ե խաղալու, քան հացահատիկային պրոբեմայի լուծման վորոշումը:

Հիմա յերկրի խնդումատրացման և հացահատիկային պրոբեմայի լուծման ասպարիզում հայտնաբերված բացառիկ հաջողությունների մոմենտին պատահական չե, վոր այս վորոշումն հանդես ե դալիս:

Պետության ձեռքին յեղած վորոշակի արտադրական և նյութական հնարավորությունները և հացահատիկային խոշոր տնտեսությունների շինարարության փորձառության կուտակումը հնարավոր դարձրին իր ամբողջությամբ զնել անամսապահության հարցը, տալ այնպիսի ծրագիր, վորը բնդունակ և ապահովել առաջիկա 2-3 տարվա ընթացքում, անամսապահական դժվարությունների վերացումը:

Բնականաբար անամսապահության վերակառուցումը պահանջում է կապիտալիստական յերկրների խոշոր տնտեսությունների փորձառության մաքսիմալ ոգտագործումը. Այդ փորձառության ուսումնասիրության կազմակերպմանը պետք է տնցնել իսկույն և յետ: Ծնժխանի յե, վոր ամերիկական փորձառությունը խորհրդային պետության մեջ տեղափոխելիս պահանջվում է լրացրցիչ ստուգում: Տնտեսության վերակառուցումն մեջ մակսիմալ համարձակություն ցույց տալով, պետք է ձեռք բերենք այդ շինարարության ծայրանեղ եժանացում, վերջ տալով այդ ուղղությամբ ամեն տեսակի ավելորդությունների, վորպես ժողովրդական միջոցների շուայում: Պետք է բոլոր աշխատողների գիտակցության մեջ ամրապնդել, վոր շինությունների տեսակը, արժեքը պետք է վորոշվի մի հիմնական գաղափարով ամենակարճ ժամանակամիջոցում և մինիմալ ծախսերով քաղաքի մատակարարման համար տալ անամսապահական մթերքի մաքսիմումը, ապահովել անամսապահության առաջիկա ամենաարագ աճումը:

Կուտակցության կենտրոնական կոմիտեյի վորոշումը (մըսային կազմակերպությունները ուժեղացնելու համար կենտրոմը անհրաժեշտ համարեց մոբիլիզացիայի յենթարկել 300 աշխատողներ) տեղական բոլոր կուտակցական, խորհրդային և մասնավորապես կոոպերատիվ կազմակերպություններից պահանջում է ուշադրության և ույժի շտապ գորահավաք: Անամսապահության պրոբլեմի լուծման ամբողջ աշխատանքներում ներկայումս մտցվում է մաքսիմալ պարզություն և ծրագրի միամականություն: Կենտկոմի ցուցմունքների կատարման տեմպը ներկայումս կախված է տեղերում և համապատասխան կազմակերպությունների աշխատանքների ձեր վերակառուցման արագությունից:

Այս ժողովածում ընդգրկում է անամսապահության հիմնական և գլխավոր տեսակները Հյուսիսային կովկասի պայմաններում: Հյուսիսային կովկասը հանդիսանում է գլխավոր, իսկ մի քանի տեսակներում (վոչխարաբուժություն) միակ բազան ամբողջ յերկրի համար: Անհրաժեշտ բացառիկ ուշադրություն և ջանք գործադրել՝ բազմապատկել ուստատանյան մեր տեմպը ամերիկյան գործակատարության վրա, վորպեսզի կարճ ժամանակամիջոցում համանենք քանակի և վորակի վճռական հաջողություններին:

Ժողովածույի մեջ առաջադրված նյութերի մեծ մասը վերցրած է մգր կովսողների և խորհրդային տնտեսությունների ու արտասահմանյան փորձերից: Նյութերից շատերը մի տարուց հետո կարող են չափազանց փոքր, կամ մեր պայմաններում, բոլորովին անպետք դառնալ: Կյանքը և փորձը կարող են ցույց տալ շատ այլ բաներ, իսկ հիմա մենք պետք են մտածենք կուսակցության դրած հարցի՝ արդյունաբերության և զյուղատրնտեսության աճման տեմպերի մեջ յեղած ձեղքվածքի վերացման խնդրի լուծման մասին:

Մեր արգյունաբերության հում նյութ տալ, քաղաքի պրութարիատին՝ մթերքներ և բարձրացնել զյուղատնտեսության հենց իր արդյունքը՝ ահա այսորվա հրատապ խնդիրը:

Անամսապահության պրոբլեմը պետք է լուծել նույնպես ճիշտ և արագ, ինչպես մենք լուծեցինք հացահատիկային պրոբլեմը:

Գյուղում անհրաժեշտ է վճռական հարված հասցնել գաղափային թշնամուն՝ կուլակին, վորը ամեն մի տապարիզում խանգարում է մեր միջոցառումներին: Պետք է վերջ տալ կուլակի վսասատու հականեղափոխական աշխատանքին, վոր տանում է միջակների ու չքավորների մեջ անասունները ծախծիելու համար: Կուլակային այս „աշխատանքի“ դեմ մեզ անհրաժեշտ է զյուղում ծափալել կատաղի աշխատանք: Այդ բանի համար կուլակին պետք է արժանի պատիժ տալ և միաժամանակ զյուղացիներին պարզ կերպով հայտնել, վոր առանձին զյուղացիների կողմից „խորամանկությամբ“ պրոլետարական պետությանը խարելու փորձերի համար նրանք կստանան ծանր

պատիժ։ Նրանք, ովքեր ոգտվելու յեն կուլակի դեղատոմսերով, ովքեր ծախծիում են իրենց անասունները, ովքեր փորձում են մի մտրակով միայն կոլլսող ընդունվել և հույս դնել, վոր այնտեղ պետությունից ոգնություն կտանան, այդպիսի ՝,խելոքներին՝՝ պետք եւ սանրել կուլակային սանրով և կոլլսողի աշխատանքներից թնդանոթի ոռումբի հեռավորության վրա պահել։ Անասնապահության պրոբեմը պետք եւ լուծել նույնպես վճռողականությամբ ու ճշգրտությամբ, ինչպես ըոլշեիկները լուծեցին այլ խնդիրներ (կոխվ զինված հականեղափոխության դեմ, պարար աշխատանքային ճակատում, պայքար սովոր դեմ, պայքար հացահատիկային դժվարությունների դեմ և այլն)։

Ինչպես ամբողջ ժողովրդական անտեսության վերակառուցման ընագավառի պայքարը, նույնպես ել մեր անտառապահության բարելավման և բազմացման համար մղվող պայքար և պատասխանատու յեւ և անհետաձգելի։

Ինչպես սոցիալիզմի կառուցման այլ ասպարեզներում, այնպես ել այստեղ պետք եւ ավ հիշել լենինյան վառ խոսքերը.—

Հասնել յեվ անցնել։

Նիկ. ԲՈՐԵՆԿՈ

## ՅԱ. Պ. ԿԱԼՆԻՆ

ԶՅՈՒԴԱՑՆՑԵՍ

## Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿԱԹՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՈՒՄ

ԿԱԹՆԱՅԻՆ ԸՆԸՆՆՎԱՀՈՒԹՅԱՆ ՆՁԱՆԸԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՅՈՒՍԽՍՅՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հյուսիսային կովկասիուայների մեծամասնության ընական պայմանները միանգամայն բարենպաստում են կաթնային անասնապահության դարգացման թեկուզ Հյուսիսային կովկասում առայժմ կաթնատնտեսությունը թույլ և զարգացած, յուղի և պանրի գործարանները քիչ են և կաթի մշակման աշխատանքները չեն կանոնավորված, բայց և այնպես, 1927 թվին, կաթնաանասնապահությունը տվեց 14 միլիոնի ագրանքային ավելցուկ, այն ինչ մոխ անասնապահությունը քանակով շատ լինելով հանդերձ, տվեց միայն 20 միլիոնի։ Յեթե կաթնային ոայոններում ձեռք բերվի կովերի կաթնատվությունը, վարն այժմ հավասար է 10-12 ցենտների, բարձրացվի գոնք մինչև 16 ցենտների (100 փութ), ապա կոլխոզների և կոռպերատիվների գործարանների կաթի սարքավորված մշակման միջոցով հնարավոր կլինի առաջիկա տարիները յերկրամասից արտահանել մինչ կես միլիոն փութ յուղ։ Բացի դրանից, յերկրամասը իր պահանջը կրավարարի լրիվ կերպով։

Պանրի և յուղային գործարանների քանակի արագ աճումը, կալմեխային ու անցեղ անասունները կաթնային և կարմիր-գերմանականով արագորեն ֆոխարիները ցույց են տալիս, վոր կաթնատնտեսությունը զարգանում է հսկա քայլերով և վոր նրան սպասում ե մեծ ապագա։

## Ի՞նչ ե ՏԵԼԻՄ ԿԱԹՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ։

Կոլխոզներում կաթնատնտեսության զարգացումը տալիս ե նրանց մեծ ոգուտ։ Կովը հանդիսանում է կատարելագործված մեքենա, վորը մեծ ոգուտով հանում է կերը, մանավանդ կոպիտ կերը վերածում է մարդու

մննդի մթերքներ: Սա հնարավորություն ե տալիս կոլխոզներին մեծ ոգուտով ոգտագործել հացահատիկային տնտեսության մնացորդները՝ հարցը և մղեղը, կթի կովը, ընդունակ ե համարյա խսկույն և յետ կերը վերադարձնել կաթով, այն ինչ տնտեսության բոլոր մյուս ճյուղերում ծախսերը վերադարձվում են մեկ ապա և 3-4 տարուց: Բացի գրանից, կթի կովը հնարավորություն ե տալիս մեկ հեկտար հռղամասից ստանալ ավելի մեծ ընդհանուր յեկամուտ: Այսպես որինակ, յերկրային փորձակայանը գտել ե, վոր սիլոսի համար ցանքած մը հեկտար յեգիպտացորենը տալիս ե 6,3 ցենտներ կաթ 500 ռ. արժողությամբ, այն ինչ մը հեկտար ցորենը տալիս ե 80 ռուբ. վոչ ավել ընդհանուր յեկամուտ:

Վորովհետեւ խոտի բոււտսերից շատերը դիմանում են յերաշտին և նույնիսկ յերաշտուտ տարիներում տալիս են մեծ թերք և տնտեսությունը ապահովում են կերով, ապա զարգացած կաթնա-անասնաբուժություն ունեցող կոլխոզն ավելի կայուն է լինում և անբերի տարիները ավելի հեշտ կանցկացնի, քան միայն հողագործությամբ զբաղվող կոլխոզը:

Վերջին յերկու տարիներում յերկրամասի կաթնարուծական ընկերությունների կովերից ստացած ստույգ հաշվի առնված յեկամուտը հատեյալն է. 22-25 ցենտներ կաթ տփող կովը, յուղի պատրաստման սայոններում տվել է 150-170 ռ. ընդհանուր յեկամուտ: Ծախսելով կերի համար 45-50 ռուբլի ոայոններում, ուր կաթը ձմեռը վորպես կաթ եր սպառվում և ամառը յուղ եր պատրաստվում, այդպիսի կովերի ընդհանուր յեկամուտը հասնում եր 200-225 ռուբլու: Վերջապես, քաղաքի մոտ գտնված ոայոններում, ուր ամբողջ տարին կաթը վորպես կաթ և սպառվում է կովը 26-27 ցենտներ կաթ և տալիս, տարեկան ընդհանուր յեկամուտը հասնում է 280-300 ռուբլու: Իսկ կերի համար ծախսված գումարը տատանվում է 95 ռուբլու սահմաններում:

Կաթնատնտեսությունը մեծ ոգութ և բերում կղիսողին նրանով, վոր հնարավորություն և տալիս հատիկային տնտեսության մեջ ազատ աշխատավոր ձեռքբերք ոգտագործելու նաև շատ կարեօր և և տյն, վոր ամբողջ տարվա ընթացքում կաթնատնտեսության աշխատանքը ընթանում և հավասար չափով: Աշխատանքի մեծ մասը կարող է կատարվել կանանցով, վորոնց աշխատանքը հատիկային տնտեսության մեջ լրիվ ոգտագործված չի լինում:

Հետեաբար, կաթնային անստեսության զարգացում կոլխոզում՝  
1) ապահովում և անբերրիության տարիներում դժվար դրություններից,  
2) ավելացնաւմ և տնտեսության յեկամուտը, 3) ամրող տարվա ընթացքում հավասարապես ոգտագործում և մեծ չափով բանվորական ձեռներ և լավ վարձատրում աշխատանքը, 4) միջոցների արագ շրջանառություն և տալիս:Ա:ա թե ինչու կոլխոզներն իրենց տնտեսությունը վերակառուցելիս պետք և առաջին ներքին ուշադրություն դարձնեն կարևորության:

## ԿԱԹՈՎԻՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՆՆԵՐԸ

Յերկրամասսի բոլոր դաշտաբուժական ռայոններում կաթնատնտեսությունը հնարավոր է: Ավելի ձեռնտու յե այն բավականաչափ խռնավ կիմայով ռայոններում: Այդպիսի ռայոններ են՝ Դոնեցկի և Դոնեցկո Շախտինսկի շրջանների արեմտյան մասը, ամբողջ Դոնի, Կուրանի և Արմավիրի շրջանները, Սալսկի, Մտավորպոլի և Թերեփի շրջանների արեմտյան մասերը և Մայկոպի շրջանի Հյուսիսային մասը: Բացի գրանից, կաթնատնտեսությունը միանգամայն հնարավոր և այն ազգային մարզերում, վորտեղ լեռնային արոտավայրեր, ալյանտա կոչված՝ ալպիական մարգագետիններ կան: Այսպիսի արոտատեղինները հնարավոր են՝ դարձնում պանրի ամենաթանգարժեք տեսակների մշակումը: Այսուամենահնիվ այդ մարզերու մ կաթնամսային անասունների բազմացումը ավելի ձեռնտու կլինի, քան զուտ կաթնայինը:

Ոգտավիտ կաթնատնտեսության տմբնակարեզը պայմանն ե՝  
1) կաթնային նսխիքն աժան և լավ արոտատեղով պապակիլու հնա-  
րավորությունը, 2) ձեռվագ կերի ձեռնտու մթերման հնարավորությու-  
նը, 3) կաթնամթերքների ձեռնտու վաճառման հնարավորությունը.

Բացի վերոհիշյալ ռայոններից, կաթնատնտեսությունը արդյունավետ է յերկրամասի բոլոր արդյունաբերական և ամառանոցային քաղաքների շուրջը, նույն իսկ այն գեպքում, յերբ կերի մի մասը պետք է լինում բերել ուրիշ ռայոններից: Կաթի անմիջապես վաճառելու ողափետությունը լիովին ծածկում է ծախսակրը, Քաղաքներին կից այդպիսի ռայոններն են՝ Ռոստովը, Տագանրոգը, Շախտը, Նովօրոսիյսկը, Գրոզնին, Մոչին, Պյատիգորսկը, Կիւլավողակը:

ԱՆԱՊՈՒՆԻ ՑԵՂԻ ՑԵՎ ԿԱԹՆԱՅԻՆ ՆԱԽՄԻ ԸՆՏՐՈՒՄԸ

կաթնատնտեսության հաջողությունը միծ մասամբ կախված է կաթնային անասունի ցեղի և նախրի ընտրությունից. կաթնային

անասունների ցեղերը շատ են, բայց նրանցից ամեն մեկը լավ և միայն համապատասխան պայմաններում։ Այդպես որինակ, «խոլմագորկան» հանդիսանում է ԽՍՀՄ-ում առատակաթ ցեղերից մեկը, լավ կիթ և տալիս միայն վոչ շատ տաք ամառները, ճյութալից մարդադաշտերում արածելիս։ Ցեղե հանկարծ նրան տեղափոխեն որինակ Սալսկի շրջան, վորտեղ ամառը տաք և և յերաշտու, իսկ արոտատեղիները կոչտ և ժլատ, ապա նա վոչ միայն տեղական կովերից պակաս կաթ կտա, այլ ավելի վատ, նա սկսում է մաշվել Հայեաբար, պետք և այնպիսի կովեր ընտրել, վորոնք վոչ միայն շատ կաթ տան, այլ և միանդամայն համապատասխանեն կաթնալին տնտեսության կազմակերպող ույսոնի կլիմային և այլ տեղական պայմաններին։

Ցերկարամասի տափարակ մասի համար ամենահարմարը կլինի կարմիր գերմանական ցեղի անասունը։ Այս տեսակը 100 տարի առաջ Ուկրաինայում ստացված և տեղական կովերի և Գերմանիայից բերված գաղտորների կաթնալինների տեսակի ցուլերի խառնուրդից։ Տեղական տեսակից «նեմկան» ժառանգել և դիմացկունություն, կաթնայուղություն և անպահանջկոտություն դեպի կերը, արտասահմանյան տեսակից—լավ կաթնունակություն։

Նեմկալի կենդանի քաշը հավասար է 400-450 կիլոգրամի (25-27 դութ)։ Միայն հարդային կերի և 1 ցենտներ ուժեղ կերերի շաղվացքից և վատ արոտատեղիններում լինելու դեպքում իսկ «նեմկան» տալիս և տարին միջին հաշվով 18 ցենտներ (150 դույլ) կաթ։ Լավ հսկողության և կերակրելու դեպքում բարձրացնում է կերը մինչև 30 ցենտների (250 դույլի)։ Նրա կաթը արտասահմանյան կաթնային ցեղերի կաթից ավելի յուղալի յե և 1 կիլո յուղ պատրաստելու համար գնում է 23-24 կիլո կաթ։

Ցերկարամասի լեռնային սայսների համար կաթնանասուններից ամենահարմարն է տեղական կովկասյան անասունը—փոքր-կովկասյան և մեծ կովկասյան սերունդները։ Այս անասունները մանր են, բայց համեմատաբար կաթնունակ։ Այդ յերկու սերունդներն ել միջին հաշվով տակիս են 5-6 ցենտներ (40-56 դույլ) կաթ, ունենալով 120-150 կիլո կենդանի քաշ։ Կենդանի քաշի մեծությունը կախված է կերի պակասությունից, վորովինեան ընտակչությունը ձմեռված համար շատ քիչ կեր և մթերում և անասունը բատացի կերպով սոված է մնում։ պահելու և կերակրելու լավ պայմաններում, անասունը արագ կերպով բարձրացնում է քաշը և կիթը։ Այդպես որինակ՝ Ուրուպօրկայայի կաթնաբուժական փոք-

նական կայանում 2 տարվա լավ խնամքից մեր կովկասյան սերնդի կովերի նախիրը ավելացրեց իր կենդանի քաշը 219 կիլոգրամից մինչև 312 կիլո, իսկ կիթը 6-7 ցենտներից մինչև 14 ցենտներ (110 դույլ)։ Իսկ առանձին կովերն ունենալով 250 կիլո (15 դութ) կենդանի քաշ, տվին 20-22 ցենտներ (170 դույլ) կաթ։ Սրան կարելի յե ավելացնել, վոր լեռնային անասունը շատ դիմացկուն է և ընդունակ և արածել ամենազարդար արոտատեղերում։ Կերի տեսակետից ավելի ապահով ույուններում, ինչպես կարարդայի և կարաչայի մի քանի ուարոններում, պետք և լավացնել տեղական անասունը, շվեդական և սիմմենտալյան ցեղի ցուլերով։

Անցնելով կաթնային նախիրի ընտրության, կոլխոզը պետք և անի տնտեսության համար ձեւանուու տարվա ժամանակաշրջանում։ Իսկ դա կախված է տարվա ժամանակաշրջանի կաթի գներից և կաթնային կովերի պահելու գներից։ Ցեղե ձմեռված և ամառված մեջ կաթի գնի տարբերությունը քիչ ե, ապա ավելի նպատականարմար և կաթի ամառված գինը և ընդհակառակը։ Համենայն դեպս պետք և աշխատել, վոր ամբողջ տարում ել նորածին կով լինի տնտեսության մեջ։ Դա անհաջելու և աշխատող ձեռների հավասարաչափ ծանրաբեռման համար։ Ծնելը ժամանակին կարելի յերը ցուլը նախիր չի թողնվում և բեղմնավորումը կատարվում է տնային ձեռվ։

## ԱՆԱՍՈՒՆԻ ԳՈՄԸ

Ցեղամտարին կոլեկտիվ կաթնատնտեսության անհրաժեշտ պայմանը դա լավ սարբավորված անասունգոմն է։ Նա պետք և այնպիս կառուցված լինի, վորպեսզի հարժար լինի անասնի սպասարկման համար և միենույն ժամանակ բավականաչափ լույս, տաք և հեշտ ուղարկող լինի։

Խոշոր գոմերը պետք է ունենան կերն անժիջապես մառըներին բերելու և աղքի բակից հեշտ, ուղղակի աղբանոցում հավաքելու համար ուղային կամ կախյալ ճանապարհ։ Գոմը պետք է ունենա ջրմուղ և ամեն մի կովի համար առանձին ինքնագործող, ինչքան բարձր է կովի կիթը, այնքան ել նա յեկամոււ կտա։ Բննելով զանազան կիթով կովերի լեկամուտը, ապացուցված ե, վոր Դոնի շրջանի պայմաններում 7 ցենտներ (60 դույլ) կաթ տվող կովը ամեն ժամանակ չի արդարացնում իր կերի քարձը, 12 ցենտներ կաթ տվող կովը հազիվ հազ արդա-

բացնում և կերը և աշխատանքը և միայն 25 ցենտներ (200 դրամ) կաթ տվող կովը վարձատրում և աշխատանքը մոտավորապես 100 ռուբլով։ Ահա թե ինչու պետք և նախը ընտրության դեպքում ընտրել այնպիսի կովեր, վորոնք տալիս են 20-25 ցենտներ կաթ տարին, անկախ, թե այդ կովերը ցեղական են թե հասարակ տեղական։

Խոշոր կոլխոզում անսառւների համայնացման դեպքում սկզբնա-  
կան նախիրն ընդհանրապես լինում է շատ զանազանագույն։ Կաթնային  
կովերի հետ միասին պատահում են և քիչ կաթով կովեր, վորոնք տը-  
տեսության մեջ են բերում։ Հետևաբար առաջին և կարելոր աշխա-  
տանքն է խսկան կաքնային լեկ արդյունավետ եռվերից նախիր կազմեր։

Ակզենական ընտրությունը կարելի յէ կատարել կովերի արտաքին հատկանիշներով՝ Կաթնային կովը մսային կովից տարբերվում է ավելի թեթև գլխով և ընդհանրապես ավելի թեթև վոսկրակազմով, նուռը, հեշտ ձգվող կաշվով, մեծ, կթելուց հետո կախվող ուրով, կոչոր կաթնային յերակներով և Կաթնային ջրհորներով և ուրի յետևում մեծ թվով ծալվածքներով:

Սակայն արտաքին նշաններով կովկը ընտրելիս, կարելի յե հետախալվելու Ավելի լավ ե կիթի փորձեր անել: Հաստատված ե, զոր ծնելուց հետո առաջին 2-3 ամիսները որպական միջին կիթը բազմապատկած 200-ի, ցույց ե տալիս մոտավորապես տարեկան կիթը: Որինակի համար՝ յիթե կովի այդ 2-3 ամիսներում տված կաթը որպական մէջին թղով հավասար ե 10 կիլոգրամի (24 գրլանք), ապա նրա տարեկան կիթը հավասար ե մոտավորապես 2000 կիլոգրամի (160 գուլի):

Կովի փորձնական կիթի հաշվառման զեպքում ի նկատի պետք են ունենալ վոր առաջին հորթով կովերը չեն կարող տալ այնքան շատ կաթ, վորքան հասակավոր կովերը՝ կարելի յի ասել, վոր յիթի առաջին հորթից հետո տալիս և 12 ցենտներ, յերկողորդից հետո—14 ցենտներ և յերրորդից հետո—17 ցենտներ կաթ, ապա նրա ուժերի վառ ժամանակ այսինքն 4 ըդ, 5-ըդ հորթի ժամանակ նա տալու յի 20 ցենտներից վոչ պակաս և ոյդ կովերին նախորում թուղնելը միահագամայն կարելի յի

Ամեն մի 40-55 կովին պիտք ե ունենալ մեկ ցեղական ցուլ։ Ցուլի բնարությանը պիտք ե մեծ ուշադրություն դարձնել, ախր ցցուլի արժե նախրի կեսին։ Սակավակաթ կովից ստացած ցուլը կարող է իրենից հետո թողնել 200-300 յերինչներ, վորոնք շատ վատ կաթնային կովեր կլինեն և նախիրի վորակը կվատանա շատ տարիներով։ Յեվընդ հակառակը, լավ արտադրողը կարող ե նախիրը զգալիորեն լավացներ,

առաջ բերել մատաղ կովեր, վորոնք ավելի յեն կաթ տալու, քան նրանց մայրելը, Ահա թե ինչու լավ ցուլին 500 և 1000 ոուր. տախ ափսոս չե: Ցուլին պետք ե գնել ցեղային տնտեսություններից, վորտեղի անասունը տարբերվում ե իր կաթունակությամբ և ստույգ տվյալ կա կաթի չափի և առանձին կենդանիների ծագման մասին:

Գետք և ձեռք բերել միայն կարմիր-գերմանական ցեղի ցուլ, վոր-պեսզի նրանից լավացնել տեղական կովերը, բաղմացնել և մի քանի սերնդից հետո, տեղական անտառնոր ռարձնել կարմիր-պեսզմանական:

Նախըի նորոգման համար պետք ե ունենալ բավականչափ քա-  
նակով մատղաշ, այս և, ամեն մի 100 կովին 10 յերինջ, 12 զլ. տա-  
րբեկանից մեծ հորթ և 15 հորթ մինչև տարեկան հասակով։ Հենց սլոզ-  
բից կոլսագում ամբողջ մատղաշը ստանալ լով կովերից, վորպեսդի նը-  
րանցով հնարավոր լինի քիչ կաթ տվող կովերին շուտ փոխարինել։  
Նախիրն ընտրելուց հետո պետք ե հոգ տանել կովերի ծնունդը ժամա-  
նակը հարմարեցնել ջրելու հարմարություններով։

Վորքան մեծ լինի գոմը, այնքան ել հարժար ու եժան կլինի ծախ -  
սը ամեն մի անասնի զլիսի հաշվով : Այս տեսակեալից խոշոր կոլեկտիվ  
տնաեսությունն ունի մեծ առավելություն: Մեղանում այդպիսի խոշոր  
անասնաբակեր, ինչպես 500 զլուխ անասունի, առայժմ չկան, բայց  
արդեն մոտիկ ժամանակում կանցնեն նրանց կառուցման: Նոր կազմա -  
կերպված կոլլոզիվներին առաջին ժամանակները պետք կլինի վերակա -  
ռուցել և սարքավորել յեղած: Քիչ թե շատ պիտանի շինությունները,  
մի գուցեն նույնիսկ կառուցել նոր ժամանակավոր եժան գոմեր:

Լավ գոմիք հիմնական պահանջները հետևյալներն են՝ պատերի բարձրությունը պետք է լինի վոչ պակաս 2 մետր 80 սանտիմետրից և շենքի իրա լայնությունը վոչ պակաս 9-10 մետրից: Կուսավորությունը պետք է լինի այնպես, վոր պատուհանների լուսանցքները հավասար լինեն հատակի մեկ տասներկույթիրարդական տարածության: Դռների լայնությունը վոչ պակաս 2 մետրից: Թեկուզ ամենաթիթե, բայց առա ստաղ պարտադիր ե: Հատակը ամենից լավ ե բետոնից, աղյուսից, բայց կարելի յե և փարտի, կավի վրա խիստ տեղապորած տախտակից կամ փայտից, Աղբային անցքը և առվակները լավ ե բետոնից շիներ:

Կարենը գործ ե հանդիսանում անասունների տեղափորումը, կեր-  
ամանների մառաւների կառուցումը, Վորպեսզի միայն աղբի մի անցք  
լինի, ավելի լավ ե անասունները տեղափորել զլուխներով դեպի պատր։  
Երբամանների և պատի մեջ պետք ե լինի մի մետրից վոչ պահան լայ-  
նութամբ։ Եետեսեւ, անուշան անուշան անուշան անուշան

Ամերիկական կերամանների և կատերի (Կապ-խամութների) կառուցման դեպում կովերի մասրն ամենից լավ և անել կարճ։ Մասրի լայնությունը 1 մետր, Մասրի արդարի կառուցման դեպում հեշտ և անտառնին մաքուր պահել։ Անհրաժեշտ և նաև նախատեսնել անասնաբակի ողամաքության լավ սարք։

Վորովինեա գոմի կառուցումը և վերասարքավորումը լուրջ գործ ե, ուստի բոլոր տեխնիկական ցուցմունքների համար կոլխոզին անհրաժեշտ ե դիմել կաթնային միության, վորը նախագիծ և սմետա կազմելու համար կարող ե ուղարկել իր մասնագետին։

## Ի՞նչՊԵՍ ԱՊԱՀՈՎԵԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐՈՎ ՅԵՎ Ի՞նչՊԵՍ ԿԵՐԱԿՐԵԼ ԱՆՏԵՍՈՒՆԸ

Ոգտավիտ կաթնատանտեսությունը հնարավոր և միայն այն դեպում, յեթե նա միանդամայն ապահոված և պետքական կերով։ Միանդամայն անհրաժեշտ ե, վորպեսզի տնտեսության մեջ բացի պետքական կոպիտ կերերի պահեստից, լինի նաև հյութալի և ուժեղ կերերի պահեստ։ Նախ քան նախիրի չափը վորոշելու, պետք և հաշվի առնել թե կերի ինչպիսի պահեստ և ստացվում գաշտամուծության մնացորդներից (հարգ, մղեղ) և վրոպաշնի կուտուրաներից, իսկ յեթե կոլեկտիվ տնտեսությունն ունենա միակ անասնապահական թեքում, ապա վորքան կեր կստացվի հողի այն ատրածությունից, վորը գտնվում ե կոլխոզի տրամադրության տակ, յեթե անց և կացվելու կերային սերմափոխություն։

400-450 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող և 25-30 ցենտներ կաթավող ամեն մի կովին 180 որ ակուղությամբ գոմում կերակրելու համար միջին հաշվով անհրաժեշտ ե՝ կուտ կերերից—6 ցենտներ հարգ, 7-8 ցենտներ ցորենի մղեղ, 8-9 ցենտներ խոտ, ընդամենը 20-23 ցենտներ հյութալի կերերից—25-30 ցենտներ կերակրելու ճակնդեղից։ Ուժեղ կերերից—7-8 ցենտներ ցորենի թեփ, արևածաղկի քուսպ և տրորած յեղիպտացորեն։

Չկթվող կովերի համար անհրաժեշտ ե՝ 18-20 ցենտներ կոշտ կերերից, 15 ցենտներ հյութալի և 2 ցենտներ ուժեղ կերերից։ Մի տարեկանից ավելի մատղաշի համար՝ 12-15 ցենտներ կոշտ կերերից, 10 ցենտ, հյութալի և 2-3 ցենտներ ուժեղ կերերից։ Մինչ մի տարեկան հորթերի համար անհրաժեշտ ե 6-7 ցենտներ խոտ և 4 ցենտ ուժեղ կերերից։

Սակայն այս չափերը միայն մոտավորապես են և հաշվառման ժամանակ կարող են ծառալի միայն վորպես որինակելի չափեր, վորով կարելի յե հաշիվ կազմել, թե անտեսության մեջ գտնված կերով ինչքան կարելի յե կերակրել և ընդհակառակը՝ վորքան կեր և անհրաժեշտ տվյալ նախիրի համար։

Ինչպես ստանալ տնտեսության մեջ պետքական կերերը ավելի ոգտավետ կերպով։ Այս հարցին պատասխանում են յերկրամասի գյուղատնտեսական փորձնական կայանները։ Այսպես որինակ՝ յերկրային փորձակայանը իր բազմամյա դիտողության հիման վրա յեկավ այն յեղացության, վոր լավ կերեր ստանալու ամենազավետ ձեվը, դա եզիթացորեն ե ցանելն յել երա սիրոսացումը։ Կերեր ստանալու այսձեր յմի հեկտարից 2 և կես անգամ ավել կերի մննդատու նյութեր և տալիս, քան սուդանկան, 9-ը անգամ ավելի, քան յոնջան և 11-12 անգամ ավելի, քան բնական խոտահունձքը։

Յեղիպտացորենի սիլոսացման առավելությունները շատ են. 1) յեղիպտացորենը համարյա ամեն ժամանակ և նույնիսկ յերաշտի ժամանակ աալիս և սիլոսի համար 200-300 ցենտներ կեր, 2) սիլոսած յեղիպտացորենը սանչելի կեր և կաթնատու անասունի համար, վոլուրինում և արոտին ու կուշտ կերերին, 3) սիլոսացումը վոչմի կապ չունի յեղանակի հետ և միանդամայն ապահով և հրդեհի տեսակետից, 4) սիլոսը կարող և պահել մինչ 3 տարի, 5) սիլոսը ամենտեժան կերերից մեկն ե։ Անա թե ինչու կարնատնեսական կոլխոզ կազմակերպելու նես միաժամանակ պետք ե սկսել սիլոսի աշտարակի կառուցումը։

Վորքան մեծ լինի սիլոսային կառուցումը, այնքան քիչ կլինի նրա շինարարության ծախսը 1 տոնն կերի վրա հաշված, Համենայն դեպս սիլոսի աշտարակ պետք և շինել վոչ պակաս, քան 100-150 տոննի համար։ Ամեն մի կթվող կովին մի տարվա ընթացքում պետք և տալ միջին հաշվով 25-27 ցենտներ սիլոս (այստեղ մտնում ե նաև սիլոսի վորոց պաշար և մասուկա համար, արտատաղելիների վատ լինելու դեպքում) Ամեն մի կովի համար անհրաժեշտ ե ցանել մեկ ուրեուղական հեկտար յեղիպտացորեն։ Սիլոս կարելի յե պատրաստել արևածաղկելոց և ամեն տեսակի ուրիշ կառաջ կառաջից։ (Սիլոսելու մասին կարդացեք Գիտցիկադիկի «կերերի սիլոսումը» և Պրիկաշիկովի ու Ասոտովի «Սիլոսների կառուցումը» գրքերը)։

150-160 տոննանոց (10.000 վութ) սիլոսային շենքի կառուցումը արժեք մոտավորապես 4-5 հազար ոուրլի, սակայն այս ծախսելից հար-

կավոր չե վախենալ, նըանք շատ շուտ կվարձատրվեն, իսկ աշտարակը կարող ե ծառայել մինչ 50 տարի:

Այս դեպքում, յերբ հնարավոր և կոլլոգում կառուցել սիլոսային շնչեր, իսկ կլիման այնքան ել թերաշտային չե, պետք ե ցանել ճակընդեղ կերի համար: Մի հեկտարից ճակնդեղի միջին բերքը 400 ցենտներ ե, բայց լավ տարիներում համառում ե մինչ 700-800 ցենտների, ջնայած իր ջրային լինելուն, նրա մի հեկտարից ստացվում ե ավելի շատ սննդատու նյութեր, քան զանազան այլ հացահատիկային կուլտուրայից: Ճակնդեղային կերի ինքարժեքը հավասար և սիլոսի ինքնարժեքին: Այսպիս որինտկ՝ մի կիրոգրամի հավասար վարսակի սննդատուույժը (կերի միավորը) թեփի մեջ արժե 5 կոպ. հասարակ խոտում—4 կոպ., գարիում—4 կոպ., իսկ ճակնդեղում միայն 2 կոպեկ:

Ամեն մի 15-20 կովի համար, 400 ցենտներ միջին բերք տալու դեպքում պետք ե ունենալ 1 հեկտար նակնդեղի ցանեա: Մեկ ցենտներ խոտ փոխարինելու համար պետք ե վերցնել 3 և կես ցենտներ ճակընդեղ, իսկ հարդի 1 ցենտները փոխարինելու դեպքում պետք ե վերցնել 2 ցենտներ ճակնդեղ:

Ամենամեծ ուշադրությունը պետք ե դարձնել միամյա խոտի, սուլանկայի վրա, վորը լավ ինամք տանելու դեպքում կիսայերաշատային ռայոններում տալիս ե 40-50 ցենտներ բերք, իսկ ավելի խոնավ ռայոններում՝ մինչ 100 ցենտներ խոտ: Սրանից հետո գալիս ե բաղմամյա յոնջա խոտը, վորը յերաշտային ռայոններում տալիս ե 20-30 ցենտներ, իսկ խոնավ ռայոններում՝ 70-80 ցենտներ խոտ: Միամյա կուլտուրաներից կարելի յե առաջարկել և վիկայի խառնուրդը վարսակի հետ, վորը առաջ ե 20-25 տոնն լավագույն խոտ:

Նատ կարեռ հարց ե հանգիսանում անասունը լավ արոտատեղով տապահովելը: Յերկրային փորձակայանը գտել ե, վոր անասունը ցանովի արոտատեղերում պահելը ավելի ձեռնոտու յե:

Ցանովի արոտատեղերի համար ջոկված են այնպիսի բույսեր, վորք տարբեր ժամանակամիջոցում ցանելու դեպքում տալիս են սմբողջ ամառը պահելու համար լավ արոտատեղեր: Որինակի համար՝ աշնանային հաճարը (ցանվում ե աշնանը), վիկո-վարսակային խառնուրդը, սուլանկան, յեգիպատացը բնը, սորգոն: Կովերը սիփական կապով արածեցնելու դեպքում մի կովի արածացման համար անհրաժեշտ ե 6-7 հտողար քառակումի մետր (կես դեսյատին), այնինչ արոտատեղ անհրաժեշտ եր 4-5 անգամ ավելի և անասունն ել սոված կլիներ,

Ցանովի արոտատեղիները արգեն ընդունված են յերկրամասի կոլլոգներից շատերում և մեծ ոգուտ են բերում:

Անասունի ուղիղ կերակրումը մեծ և պատասխանատու գործ ե: Միևնույն կերը տալով կաթնատու անասունից կարելի յե ստանալ զանազան ինկամուտ, նայած նըան, թե վորքան լավ և կազմակերպված կերակրումը: Դժվար ե կրճատ կերպով պատմեն թե ինչպէս են ուղիղ կերակրում անասուններին, այդ գրված ե հատուկ գրքերում:<sup>1)</sup> Կարելի յե հիշատակել միայն հետեւյալը<sup>2)</sup> կերակրումը պետք ե համաչափել կովի կենդանի քաշի և տված կաթի ճիշտ նորմայի հետ: Կերը բաժանել քաշով. 3) նորմաները կազմելիս պետք ե հիշել վոր լսա հնարավորության կերը պետք ե լինի զանազան տեսակի, վորովհետև այն ժամանակամաս անասուններն ուտում են մեծ ցանկությամբ և ավելի ոգուտ են տալիս:

Պետք ե ձգտել քիչ կոշտ կերեր տալ, փոխարինելով այլպիսիք պաղարմատներով և սիլոսով, 3) առաջին հերթին կերակրել այն կերով, վորը անտեսնության մեջ կա մեծ չափերով և վորը ամենաեթանն ե. 4) կաթնանասունին և մատղաշին վոչ լինվ կեր տալը չափադասց վը նասակար ե: Կոլխոզում կերի մշտական պակասության դեպքում ավելի լավ ե կրճատել նախիրը, քան պակասեցնել կերը:

Ինչ վերաբերվում ե անասունի խնամելուն, ապա ալիք պետք ե լինի ինչքան կարելի յե լավ: Կովերին անհրաժեշտ ե ամեն որ մաքրել: Դեպի անասունը վերաբերմունքը պետք ե լինի հանդարտ և քննուց:

Բացի դրանից, ամբողջապես պետք ե կատարել զոռակինիկական և անասնաբուծական մինիմումը: Այդպիս որինակ՝ 1 տարի 8 ամիս հասակից պակաս յեզներին բաց չթողնել զուգավորման համար: Առջարներն և յերինջներն արածեցնել առանձին նախիրներով և այն: Ինչ վերաբերվում ե անասնաբուծական մինիմումին, ապա նրա իրականացման վրա պետք ե գարձնել առանձին ուշադրություն, վորպեսզի կոլեկտիվ նախիրի մեջ վարակիչ հիվանդություններ չներմուծվեն և տնտեսության աճագին վասաներ չնացնեն: Համենայն դեպս անասնաբուծական մինիմումը կոլխոզում իրականացնելը ավելի հեշտ ե, քան անհոտական անտեսություններում իրենց անհարմար գոմերով: Մենք հավատացած ենք, վոր խոշոր անասնապահական կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելուց հետո կենդանիների վարակիչ հիվանդությունները հետպհետե կվերաբան և ժողովրդական տնտեսությունը կապատի տարեկան հսկայական վլասներից:

<sup>1)</sup> Մ. Բ. Շաբիկին—«Եթված կովերի ձեռնոտու կերակրումը:

## ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՄՃԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՍՊԱՌՈՒՄԸ

Կաթնամթերքների մշակման ու սպառման հարցը կախված է նրանից, թե ինչքան հասու յի գանգում կոլխոզը սպառման շուկայից և դանագան կաթնամթերքների գներից ու պահանջից:

Խոշոր արդյունաբերական քաղաքների շուրջը ամենաոգտակարը — դա կաթի սպառումն է: Կաթի գինը բավականին բարձր է և նրա պահանջն ել սաստիկ մեծ: Թե վորքան դա ոգտակար է, ցույց է տալիս կոլխոզի կաթնարտելի որինակը (Կուլիշովկա, Ազովի ույոն, Դոնի շրջան), 1928 թ. ընթացքում 25 ցենտներ կաթ տված կովը տվեց 234 ռուբլի ընդհանուր յեկամուտ, 8 ռուբլու կարելի արժեքի դիմաց. մեկ ցենտներ կաթից միջին հաշվով ստացան 3-ական ռուբլի:

Ռոստովի ու Տագանրոգի ներկայում կաթ մատակարող կոլխոզների փորձը ցույց է տալիս, վոր 20-25 կիլոմետր տարածության վրա կարելի յի կաթը տեղափոխել կառքով, իսկ յերկաթուղով և 100-150 կիլոմետր: Եթե կաթը կարելի յի փոխադրել ել ավելի մեծ տարածությունների վրա:

Անմիջապես կաթ սպառելը հարմար է նրանով, վոր այդ դեպքում հարկավոր չեն վոչ թանգարժեք շինություններ և վոչ ել սարքավորումներ: Դրա համար բավական է ունենալ վոչ այնքան մեծ շինք, այսպես կոչված կաթնատուն, ընտոնած հատակով, ուր կատարվում է կաթի սառեցնելը և կաթը տեղափոխելու անհնարության դեպքում նրանից սեր պատրաստելը: Կաթնատան ամբողջ սարքավորման արժեքը 500-600 ռուբլի յի: Բացի դրանից, պետք է ունենալ հատուկ ամաններբեկուններ: 35 լիտր կաթ տեղափորող 1 թիզոնը արժի 18 ռուբլի: Պարզ է, վոր անհրաժեշտ է ունենալ և սասցարան, անհրաժեշտ չափով սառույց մթերելու համար, մտավորապես ամեն մի տօնն կաթի համար յերեք-քառորդ խորանարդ մետր: Բիդոնները կարելի յի տեղափոխել ամեն տեսակ կառքի վրա, բայց լավ է ունենալ հատուկ հարմարություններով կառք, վորպեսզի բիդոնները շուտ չիչանան: Մեզանում ավտոմոբիլային տրանսպորտի վարդացումը այդ գործի կազմակերպման կառ մեծ զարի:

Ավելի հեռավոր ույոններում, վորտեղից չի կարելի կամ ձեռնառու չի կաթը սպառել, հարկավոր է կաթը վերամշակել պանրի, յուղի, սերի, իսկ սա արդեն պահանջում է աչքի ընկնող միջացներ:

Վորքան մեծ լինի պանրի կամ յուղի գործարանը, այնքան եժան

կինի կաթի մշակումը: Բացի դրանից, մեծ, լավ սարքավորված գործարաններում ստացվում են ավելի բարձր վորակի մթերքներ, ուստի կոլխոզին անհրաժեշտ կինի կառուցել իր գործարանը միայն այն դեպքում, յեթե ույոնում 15-20 կիլոմետր տարածության վրա չկա խոշոր յուղի գործարան: Առաջիկայում յերկրամասի կաթաշատ վայրերում պետք է կառուցվեն խոշոր գործարաններ: Բանի դեռ չեն վորոշված առելի վայրերը, առաջիկա 2-3 տարիների ընթացքում պետք կինի բավարարվել տնահնագործական փոքր գործարաններով:

Ի՞նչպիսի արտադրության վրա կանգ առնել՝ յուղագործարանի թե պանրագործարանի վրա:

Պանիր պատրաստելը կաթի սպառագործման ամենաձեռնտու միջոցն է: 1929 թ. գներով մեկ ցենտներ կաթից պանիր պատրաստելու գեպքում ստացվում եր 9 ռ. 45 կոպ., իսկ յուղ պատրաստելու դիպում—միայն 8 ռ. 60 կոպ.: Բայց պանիր պատրաստելը պահանջում է գործարանի թանգարժեք սարքավորում, լավ վարպետ և պանիր պատրաստելու համար յերկար ժամանակ, վորի պատճառով կոլխոզում միջոցների շրջանառությունը տեղի յի ունենալու շատ դանդաղ՝ տարին 1-3 անգամ:

Յուղագործարանի սարքավորումը զգալիորեն հեշտ է պանրագործությունից: Յուղի գործարանը պանրի գործարանից եժան արժի, ինքը՝ արտադրությունը ավելի հեշտ և վերամշակված կաթի փողը՝ վերադարձնում է գեպի անտեսությունը արդեն 2-3 շաբաթից հետո: Բացի գրանից, այն կոլխոզներում, ուր կաթնատանտեսության հետ միասին տարվելու, ին և տեղական գործը, այսինքն մատղաշի աճեցնելը, յուղ պատրաստել ավելի տեղին կինի, քան պանրագործությունը, Գլուխ քաշած կաթի ոգտագործումը հորթերը կերակրելու համար տալիս է լավ վարձական առարկություն, այնպես, վոր յեթե մի ցենտներ կաթից մշակել յուղ և մասցորդները ոգտագործել հորթերի համար, աղա նըր վարձատրումը կինի վոչ պակաս, քան պանիր յեփելու գեպքում: Գլուխ քաշած կաթը կինի վոչ պակաս, քան պանիր յեփելու գեպքում: Դական մեջ: Կերծապես, գլուխ քաշած կաթից կարելի յի պատրաստել բնապանիր, վորքագործությունը չափազանց պարզ է: Բնապանիրային արտադրությունը տալիս է բացի յուղի արժեքից 2 ռուբլուց վոչ պակաս հավելյալ արժեքը: Ահա թե ինչոր յերկրամասի կոլխոզներին կարելի յի առաջարկել սկզբանական շրջաններում կաթը յուղի վերամշակել:

500 կով սպասարկող, որեկան մինչև 20-25 ցենտներ կաթ մշակելու ձեռքի գործարանի համար կարելի յեւ հարմարեցնել ամեն մի շենք, վերացնելով ավելորդ միջապատերը և կառուցելով լավ բետոնած հատակ: Կարենոր ե, վոր բնակարանի տարածությունը լինի 65-70 քառ. մետրեց վոչ պակաս: Կարենոր ե նաև, վորպեսզի նրա մոտերքում գտնվի լավ (փափուկ) ջրով ջրով:

Գործարանի սարքավորումը արժն մոտավորապես 1000-1500 ռուբ. լի: Բացի դրանից, պեաք ե նաև սառցարան, վորը տեղավորելու յեւ 90 խորանորդ սառուց (չափը 6×5×3 մետրի): Այդպիսի սառցարանն արժի 500-700 ռուբլի: Հետևաբար, յուղի ձեռքի գործարանը պատրաստի շնչում կազմակերպելու համար պետք ե 2 և կես հազար ռուբլուց վոչ ավելի: Հենց այդ գործարանում կարիք յեղած դեպքում կարելի յեւ պատրաստել և սեր:

Յուղի վարպետ կարելի յեւ պատրաստել կոլխոզներից, ուղարկելով նրանց հատուկ կուրսեր, վորոնք ամեն արարի կազմակերպվում են կաթնային միության կողմից: Կուրսեր պետք ե ուղարկել դիմավորապես կանանց, վորպեսզի լիովին ոգագործի կանանց աշխատանքը կոլխոզում:

Կաթնամթերքների սպառումը կոլխոզը կատարելու յեւ բացառապես կաթնային միության միջոցով, վորը սպասարկում ե իր անդամներին, մատակարարելով նրանց կաթնային ինվենտար, կեր, վարկ, վորը սպասարկում ե նաև իր մասնագետներով կաթնային արտադրությանը. կաթնային միության հետ ունեցած սերտ կաթը միջանակ կապուտ կասցնի կոլխոզին:

## Ի՞ՆՉՊԻՍԻ ՀԱՃՎԵԱՌ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՎԱՐԺԱՏՐԵԼ ԱՃԽԱՏԱՆՔԸ

Այնպիսի բարդ գործ, վորպիսին ե կաթնատնտեսությունը, պահանջում ե նրա բաղադրիչ ամեն մի մասի ճշգրիտ հաշվեառ: Այսպես, որինակ՝ միանգամայն անհրաժեշտ ե կատարել ամեն մի կովի տված կաթի հաշվեառ, հակառակ դեպքում տնտեսության մեջ կշարունակեն, մատ այնպիսի կովեր, վորոնք չեն վարձատրում վոչ կերի արժեքը և վոչ ել նրանց վրա ծախսված աշխատանքը: Նյանապես պետք ե տանել կերի ծախսի ճշգրիտ հաշվեառ, վորպեսզի հնարավոր լինի վորոշել կաթի ինքնարժեքը և ջոկել ավելի ոգտակար նորմաներ:

Մատղաշները մեծացնելու ուղղությունը վորոշվում ե միայն ծախսված կերերի և կենդանի քաշի աճումի հաշվեառով, Ծախսված կերերի արժեքի հաշվեառով վորոշվում ե մատղաշի մեծացման ոգտավետությունը և այլն:

Միանգամայն անհրաժեշտ ե կատարել տնտեսության մեջ կերի հաշվեառը, վորպեսզի նախորդը նախատեսնել նրա ավելի նպատակահարմար ոգտագործումը և վորպեսզի ժամանակին լրացնել պակաս կերերի պահեստը:

Կերոք յեվ հաւելեգրեուլիք կարնազործուրյամբ զբաղվող ամեն մի կոլխոզինի ձեռքին պետք ե լինի միօւ:

Կաթնատնտեսությունը պահանջում ե աշխատանքի բավականին մեծ մասնագիտացում: Այսպես որինակ՝ կով կթելը չի կարելի հանձնարարել ամեն մեկին: Նմանապես փորձառություն ե պահանջում հորթի երեն կերակրելը և այլն: Ամենալավ այն ե, յերբ կաթնատնտեսության մեջ զբաղված են միջտ միենալուն մարդիկ:

Կոլխոզում աշխատանքի վարձատրությունը այնպես պետք ե լինի, վորպեսզի մի կողմից նա զարկ տա նախրի մթերքայնության զարգացման, իսկ մյուս կողմից ստացված մթերքների ինքնարժեքի իջեցման: Այդպիս որինակ՝ թանգարժեք կերով շատ կաթ ստանալը այնքան ել դժվար չե, բայց ոգտավետ չե: Ավելի կարենոր ե սովորական կերերով ավելի կիթ և աժան կաթ ստանալ: Ուստի ձեռնտու յեւ լինում, յերբ անասունին կերակրող մարդկանց, բացի աշխատավարձը, տալիս են հատուկ վարձատրություն կաթի սահմանված նորմայից իջեցնելու դեպում, վորպեսզի շահագրգռել նրանց մթերքի ինքնարժեքի իջեցումով:

Կով կթողներին նմանապես անհրաժեշտ ե շահագրգռել հատուկ վարձատրություն ըստ կթած կաթի չափին: Այն ժամանակ նա ավելի լավ կվարվի կովերի հետ և նրանց ավելի լավ կկթի: Մատղաշը խնամող անձանց պետք ե սահմանել հատուկ վարձատրություն մատղաշի լավ աճեցման համար: Գործը այսպիս դրվելու դեպքում, բոլոր կոլխոզները շահագրգռված կլինեն իրենց անտեսության ուղիղ տանելու մեջ:

## ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Կոլխոզում կաթնատնտեսության հաջող զարգացումը գլխավորական կախված ե՝ 1) կերի պատրաստելու հարցի ուղիղ դրումից, 2) նա-

խիքի մանրակրկիտ ջոկումից, 3) անասուններին կերակրելուց ու խնամելուց, 4) կաթի ձեռնուու ոգտագործումից, 5) աշխատանքի ուղիղ կազմակերպումից ու լավ դրված հաշվեառից:

Բացի այս բոլորից, վորպեսզի վարակիչ հիվանդությունները տընտեսությանը վկա չտան, անհրաժեշտ և անասնաբուժական մինիմաւմի մանրակրկիտ իրականացնումը:

Կաթնասանտեսության մեջ կապիտալ ծախսերը—որինակ՝ լավ անասնակ, սիլոսային շենքեր կառուցելը—բարձրացնելով անասունի մթերքայնությունը և նմանապես կրծատելով և հեշտացնելով աշխատանքը—արագ կերպով վարձատրվում են: Այսպիսով վորքան շուտ կունողնիկները գորահավաքեն իրենց անձնական դրամական միջոցները կաթնասնտեսության ուղիղ կազմակերպման համար, այնքան արագ նրանք կապահովեն կոլյոզի անհրաժեշտ յեկամուտը:

## Ա. Մ. ԳՐՈԴՆԵՎ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՎ

# ՄՍԱՏՈՒ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## ՄՍԱՏՈՒ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՎ ՆՐԱ ԱՊԱՐԱՆ ՀՅՈՒՄԱՍՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հյուսիսային կովկասը հանդիսանում է մի այնպիսի յերկրամաս, ուր կարող են զարգանալ անասնապահության բոլոր մասնաճյուղերը և վորտեղ նկատվում են ցեղերի զանազան տեսակները:

Համենայն գեղար, անասնապահության ամեն մի տեսակը և ճյուղը տեղական պայմանների բարենպաստ լինելուց և կախված և ունի իր վորոշակի տեղը: Դառնալով մսատու անասնապահության գոյության ու զարգացմանը, կարելի յե ասել, վոր մսատու անասունի հիմնական ցեղը յերկրամասում, դա կարմիր-կալմիկական անասունն եւ, վորը տարածվում և յերկրամասի արևելյան և հյուսիս-արևելյան հինգ՝ Ստավրոպոլիս, Սալսկի, Շախտի, Դոնեցկու և մասամբ Դոնի ու Թերեկի շրջաններում:

Յերկրամասում մսատու անասնապահության նշանակության մասն կարելի յե դատել Հյուսիսային կովկասի սահմաններից ամեն առեւ արտահանված մսամթերքների աճումից: Վերջին յերեք տարիներում արտահանվել և հետեւյալ քանակությամբ միս:

1925-26 թվականներին—20 հազար 262 տոնն

1926-27 2 32 2 — »

1927-28 2 47 2 606 »

1926-27 թ. թ. յերկրամասի հողագործությունը տվեց 157 միլիոն

ոռորդու ապրանքային ավելցում, իսկ անասնապահությունը — 48 միլիոն ռուբլու, վորից 20 միլիոն ռուբլին տվեց մսային անասնապահությունը

Զնայած, վոր տնտեսության մեջ ուժեղ չափով ոգտագործվում է ձիու և տրակտորի ույժը, այնուամենայնիվ յեղների թիվը չի պակասում, այլ վորոշ չափով ավելանում է: Այսպես որինակ՝ 1922 թվին աշխատող 100 ձիաների զիմաց կար 80 լեզ, 1925 թվին — 87-ը, իսկ 1928 թվին — 90 լեզ:

Տնտեսության մեջ յեղների այսպիսի կալունությունը բացատը գում և նրանով, վոր աշխատած կամ աշխատանքից փչացած յեղը արդին չի կորցնում իր արժեքը և նրան կերակրելով, կարելի յն ստանալ նրա լրիվ արժեքը, փչացած ձին մինույն ժամանակ կորցնում և իր արժեքը:

Յեթե ներկայումս մսատու անասունի քանակը համարյա թե բոլորին հասել և մինչպատերազմյան չափին, ապա նրա վորակը ստատիկ վատացած է: Անասունի մորթված քաշը 320 կելոգրամից իջել և մինչև 168-180 կիլոգրամի (10-12 փութ): Լծից չհանգստացած, ինչպես հարկն և նախիրում չպարտած անասունը մորթվելով և սպառվում:

Սակայն դա այլ կերպ լինել չի յել կարող: Անցյալում մսատու անասնապահությունը կիստրոնացված եր խոշոր կալվածատերերի, ձիաբուծների և միս աղողների ձեռքում, վորոնք ցարական կառավարությունից հետո գներով կապալով վերցնում ելին ահազին տարածություններով սքանչելի արոտատեղիներ: Այդպիսի պայմաններում նրանք հնարավորություն ունեյին պահել անասունը մինչև լրիվ հասակը և լավ կերցրած դրության հասցնել, սահանալով ահազին ոդուտներ: Հեղափոխությունից հետո գործը փոխվեց: Յաք ու ցիր չքավոր ու միջակ տընտեսության ուլիքը չի ներում, վորպեսզի մսատու անասունը ինչպես հարկն և պահի: Մի կողմից այդ տնտեսությունները իրենց շնչապատկան հողից չեն կարող ստանալ կերի անհրաժեշտ չափը և կազմակերպել անասունի գիրանալը, իսկ մյուս կողմից եր, նրանց ույժը չի ներում պահել անասունին մինչև 3-4 տարեկան հասակը: Լծկան ույժի պակասության պատճառով նրանք սահպած են լինում աշխատել շատերեկան յեղներով, Ալստեղից պարզ ե, վոր մսային անասնաւելահության հաջող զարգացումը հնարավոր և չքավոր և միջակ տնտեսություն ների խոշոր կոլխոզներում միանալուց հետո, վորովհետեւ այդ գործի ուղիղ կազմակերպումը ներում և միայն կոլխոզների ույժին:

Յերկրամասում և յերկրամասից դուրս պահանջի ուժեղացման հետևանքով մսամթթերքների պակասումը միանգամայն վորոշակի կերպով պահանջում ե, վորպեսզի մսատու անասնապահությանը դարձնվի բարվականաչափ մեծ ուշադրություն, քան մինչև այժմ և միայն կողեկանի անտեսության միջոցով և հնարավոր զարկ տալ անասնապահությանը:

Հյուսիսային կովկասի մի շարք ստյունների տնտեսությունների համար չափազանց մեծ նշանակություն ունի մսի անասնապահությունը, վորովհետեւ նա թույլ և տալիս հացահատիկային տնտեսության մեջ կուտակված հարդարյիե կոպիտ կերերի և նմանապես յերկրորդ սկան արոտատեղիների ոգտագործումը: Մային անասնապահության զարգացումը առաջ կրերի խոտարօւյսեր ցանելու անհրաժեշտությունը, վորպիսին զյուղատնտեսության մեջ հնարավոր պայման և ստեղծում լավ սերմի փոփոխման, վորը բարենպաստում և բերքի բարձրացմանը:

Հյուսիսային կովկասը, հանդիսանալով յերկրի ներսի շուկային միս մատակարարողներից ամենազլիսավորը, առավել և պետք և լայն ծավալի մսատու անասնապահության գործը, յերբ դրան բարենպաստում են մի շարք պայմաններ, ինչպես որինակ — դաշտային ընդարձակ արոտատեղիներ և կերի այլ բարենպաստ պայմանները, նմանապես և մսամթերքների բարձր վարձատրությունը:

## ՄՍԱՅԻՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՌԵՑՈՆՆԵՐԸ

Մսատու անասունը տարածված և գլխավորապես Հյուսիսային կովկասի հյուսիս-արևելյան մասում: Այդ ընդարձակ ույյոնում մտնում են՝ Դոնեցկի, Շախտի, Դոնի, Սալսկի, Ստավրոպոլի և Թերեքի շրջանների արևելյան մասերը: Այդ կիսայերաշաալին ու յերաշտային գոտիների տնտեսությունները գաշտային-անասնապահության մասունքները պայմանները անհրաժեշտ հասակը և մսա-բանվորական տնտեսուն: Հիշալ ույյոնի արևմտյան մասում արդեն անասնապահությունը ստանում և մսակաթնային ուղղություն: Այս ույյոնը տիրապետում է ամենաընդարձակ գաշտեր, վորպիսին անհրաժեշտ համարյա թե միայն մսատու անասնապահության նախիրների համար: Հենց այդ ույյոնում կիստրոնացման կալմիկական անասունը, վորը մսային անասնապահության հիմքն և հանդիսանում: Հյուսիսային կովկասում հաշվում և մինչ մեկ ու կես միլիոն կալմիկական անասուն:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս անտառապահության գլխավոր ռայոնի կալմիկական անասունի քանակը 1927 թվին (ըստ չյուսիսային կովկասի Հողային վարչության ավյալների):

Շ Ր Զ Ա Ն Ն Ե Բ	Խոշոր յազմակավառականասուններ ընդհանուր քանակը	Կալմիկական անասունների քանակը
Դոնեցկի	316	հազար
Շախտի-Դոնեցկի	443	»
Դ ո ն ի	453	»
Մ ա լ ս կ ի	577	»
Ստավրովովի	513	»
	112	հազար
	327	»
	165	»
	403	»
	324	»

Հստ կալմիկական անասունի քանակի, առաջին տեղը բունում է Սալսկի շրջանը,

Հիշյալ ռայոնից դեպի արևմուտք հատուկ մոային անասուն չկա: Սովորաբար գիրացնելու նախիրների համար ծառայում են բանվորական-բրակ և մոա-կաթնային անասունը, հատկապես նրա մուգ ուկրայնական, և սիմմենտալների խոտնուրդի տեսակները: Մսի անասնապահության կենարոնը կազմում է հյուսիս-արևելյան մասն իր ընդարձակ դաշտերով և վերին աստիճանի արժեքավոր կալմիկական անասունով Մսի անասնապահության հիմնական շրջանի այդ ընդարձակ դաշտերը գլխավորապես կազմված են խոպան բարձրախոս հողամասերից և միայն ավելի արևելյան շրջաններում դասավորված են կիսաանապատային յեղնային խոտի դաշտերը: Վերջին տարիների ընթացքում խոտնարքների ցածր բերքը բացատրվում է արոտատեղիների և խոտհարքների անշափառ արածեցմամբ, վորից պակասում և ոդտակար բույսերի աճումը առոտներում և նրանց տեղ հանդես ե զալիս ուտելու համար անպետք յեղնին: Այս յերկույթի դեմ պետք ե պայքարիլ և մսատու անասնապահության կազմակերպմանը անցնող կոլեկտիվ տնտեսությունները ուղղված են անցկացնեն մի շարք անհետաձգելի միջոցա-

1) Հողի մակերեսային փխրացմամբ կենդանացնել ուժի կերպով հատված խոտհարքերը.

2) Սահմանել խոտհարքների ուղիղ ոգտագործումը, դաշտերում անասունների ուղիղ, հաջորդական արածեցմամբ, այն հաշվով, վորպես-զի հնարավոր լինի սպատակար բույսերի սերմանելը:

3) Հսկել, վորպեսզի արոտատեղիների տարածությունները չափավոր ծանրաբեռնված լինեն անասուններով,

Ցերե դաշտային խոտհարքների և մարդագետինների իսկապես ուղիղ խնամքի հոգատարություն սահմանվի, հաջողությամբ կարելի կը-լինի հասնել խոտի հավաքման զգալի մեծ չափերին և անասուններին ավելի յերկարատև և լավ արածելու հնարավորություն կտրվի:

### ՄՍԱՏՈՒ ԱՆՍՍՈՒՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային կովկասի համար ամենահարմար մսատու անասունը, որ կալմիկական անասունն եւ նա զանազանվում ե ցրտի և նմանապես շոգի դիմացկունությամբ: Ամբողջ տարին կարող ե գտնվել բաց ողում: Լավ ե վարձատրում իր կերածը: Ամենալավ տեսակի միս ե տալիս: Այդ անասունի պակասությունն ե ուշ հասունացումը: Բացի դրանից, նկատվում են նրա մարմնի կառուցման ինչ-ինչ բացեր, որինակ՝ նեղ և կարճ հետույքը: Սակայն այս անասունի ունեցած արժեքավոր վորակ-ները ծածկում են այդ պակասությունները: Մսատու անասնապահությամբ զբաղվելիս ընդհանրապես նպատակ և մշտական հոգս պետք ե լինի անասունի ձեր բարելավումը, հասունացման արագության բարձրացումը և կենդանի քաշի ավելացումը:

Կալմիկական անասունի և անգլիական արագ հասունացող՝ շորտ-գորների և գերեփորդերի ցեղերի հետ զուգավորումը զգալի չափով բարելավում է մարմնի ձեր և ավելացնում է անասունի մոի քաշը և բարձրացնում մոի վորակը: Պետությունն արդեն իսկ սկսել ե այդ ցեղի ցուլեր արտադրողների Հյուսիսային կովկաս ներմուծելը: Բայց այսպիսի բարելավումը տեղին ե այն գեպում, յեթե տնտեսությունը ունի բարելավումը տեղին ե այն գեպում, յեթե կարող ե ուտեցնել հացահատիկային կերերը:

### Ի՞ՆՉՊԵՍ ՃՈԿԵԼ ՆԱԽԻՐԸ

Կոլեկտիվային նախիր ջոկելու ժամանակ, հարկավոր և հետեւալ պահանջները ներկայացնել անասունին:

1) Կովերը 8-9 տաքեկանից ավելի չպետք ե լինեն.

2) Կալմիկական շարքային կովի միջին կենդանի կշիռը 360 կիլոգրամից (22 փութ) պակաս չպետք ե լինի: Յանկալի յե նախիրը կազմել ավելի խոշոր անասուններից:

3) Կենդանիները պետք ե միանգամայն առողջ լինեն, վորի համար անհրաժեշտ ե անասնաբույժի քննությունը:

4) Հարկավոր ե ջոկել միայն լավ կազմվածքով՝ լայն ուղիղ թիկունքով, խորը կրծքով, կոլորացած վողնաշարներով և կարճ վոտներով անասուններին: Յերկարավոտ, նեղ հետույքով և թիկունքով, տափակ և կախ ընկած վոտով, կոպիտ ու մարմնին կպած կաշվով ու կոպիտ բըրդով ծածկված կենդանիները վաս մսատու անասուններ են:

5) Մսատու անասունի նախրի համար հարկավոր ե առաջին հերթին ջոկել կալմիկական անասունը ու հետո միայն այլ ցեղերից ու խառնուրդներից:

Կովերի ընտրությանը ներկայացրած պահանջները գդալի չափով վերաբերվում են նաև արտադրողների՝ ցուլերի ընտրությանը: Բացի դրանից, ցուլերից պահանջվում ե նաև կազմվածքի ճկունություն, արիտականություն, արտահայտություն և արագաշարժություն:

Մսատու անասունի արագ զարգացման նպատակով ուղիղ կազմած սերմնավորական նախիրը պետք ե ունենա 52 գլուխ կով, 11 գլուխ մինչ 3 տարեկան յերինչ, 14 գլուխ մինչև 2 տարեկան յերինչ, 22 գլուխ մինչև 1 տարեկան հորթեր և 6 գլուխ արտադրողներ՝ ցուլեր (պահետով):

Ուժեղ և առողջ ոերունդ ստանալու համար կովի առաջին ծինը պետք ե կատարել կովի 4 տարեկան հասակից վոչ առաջ: Ծնունդը պետք ե հարմարեցնել այնպես, վոր տեղի ունենա գարնանը, յերբ կովերը արոտատեղիներում ստանում են բավական սնունդ: Մսատու անասունի ձմեռվա ծնունդը անհարմար ե, վորորհետև ծծկեր հորթով ձմեռ անվկացնելը կովի համար շատ և շատ գժվար ե և մյուս կողմից ել հորթերը մեծ չափերով վոչնչանում են: Ամենից լավ ե կովի բեղմափորումը կատարել հունիս ամսում:

Ազատ բեղմնավորման դեպքում անհրաժեշտ ե, վոր մեկ ցուլին 30 գլուխ կովից ավելի չլինի, հակառակ դեպքում յերբ 30-ից ավելի յեն, կովերը մնում են չբեղմնավորված (լըսըր): 100 գլուխ կովի մեջ չբեղմափորված կովերը նորման պետք ե 15 գլուխ վոչ ավելի լինի: Ազատ բեղմնավորման դեպքում պետք ե ավելի շատ ցուլ՝ արտադրող, քան տընային բեղմնավորման դեպքում:

Ցերիտասարդ կովերին լավ ե զուգավորել տարիքավոր ցուլերի հետ և ընդհակառակը՝ տարիքավոր կովերին՝ յերիտասարդ ցուլերի հետ: Ազատ բեղմնավորման դեպքում ցուլերը մնում են նախիրում մինչև սեպտեմբեր ամսի վերջը, վորից հետո առանձնացվում են:

Կովերին անզլիական ցուլերի հետ զուգավորելու դեպքում ամենալավ ե գործ ածել արհեստական զուգավորում և կամ թե ցուլերին բաց թողնել բիչ քանակով՝ հատուկ նախիրների մեջ:

## ՄՍԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆԻ ՊԱՀԵԼ, ԿԵՐԱԿՐԵԼ ՅԵՎ ՀԱՂԱՑՆԵԼ

Զուգավորումից մոտավորապես մի ամիս առաջ, նույնպես և զուգավորման ժամանակ, բացի խոտից, ցուլերը վորպես ուժեղ կեր, պետք ե ստանան ամեն մի գլխին մինչև 2 կիլոգրամ (5 գրվանքա) վարսակ:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամսում կովերից պետք ե հեռացնել հորթերին, Դրանից հետո մատղաները կերակրվում են խոտով և ուժեղ կերով, Հորթերին ուժեղ կերով կերակրել պետք և դեռ ևս նըրանց ծծկեր ժամանակից: Մոտավորապես 2 ամսական հասակից հորթին պետք ե կերակրել տալով ամեն մեկին 400 գրամ (1 գրվ.) ուժեղ կեր-Աստիճանաբար կերի չափը ավելացվում ե այն հաշվով, վոր ծծից կըտրելու ժամանակ չափը հասնի 1 և մեկ քառորդ կիլոգրամի (3 գրվանքա):

Մինչև տարվա վերջը, յերբ ժամանակ հորթերը արդեն ինքնուրույն կերպով կերակրվում են և ուտում են կոպիտ կեր, ուժեղ կերի չափը կարելի յե իջեցնել մինչև 800 գրամի (2 գրվանքա): Խոշոր աղացած յեզիտացործները և թեփը նրանց լավագույն կերակուրն ե:

Արգակ կերակրելը զարգացնում ե յերիտասարդ հորթերին, ուժեղ կերպով ավելացնում նրանց կենդանի քաշը և հետագայում բարձրաց նում ե հասունացման արագությունը: Շուտ հասունանալը չափազանց կարեոր ե, վորովհետև շուտ հասունացած անասունը տվելի լավ և ողտագործում կերը: Ուշ հասունացման յեզը 1 կիլոգրամով ավելանալու համար ծախսում ե 18-20 կիլոգրամ կերի չոր նյութեր, իսկ շուտ հասունացածը, նույնքան աճմար ծախսում ե 10-13 կիլոգրամ: Այսպիսով, հորթի մեծացման համար առաջին տարվա ընթացքում արված ծախսերը միանգամայն հանվում են հասակավոր անասունի վորակով: Հորթի մինչև տարեկան հասակը ընդամենը կեր ծախսվամ ե՝

Մեկ ցենտներ և 75 կիլոգրամ ուժեղ կեր, 8 ռ. 75 կոպ. արժողությամբ և 3 ու կես ցենտներ (22 փութ) խոտ—5 ռ. 40 կոպ. արժողությամբ, ընդամերը՝ 14 ռ. 15 կոպ., Բացի դրանից, հաշվի պետք ե տանել մոտավորապես 2 ռ. 50 կ. շինությունների և այլ տնտեսավարական ծախսները։ Հետաքարար անասնապահական խոշոր կոլխոզներում հորթի մեկ տարվա ծախսը կազմում ե մոտավորապես 16 ռ. 65 կոպ.։

Այսպիսի խնամողության դեպքում հորթի որական աճումը ծննդյան որից սկսած միջին հաշվով լինում է 800 դրամից (2 գրվ.) վոչ պակաս և մորերից հեռացնելու դեպքում նրանց աճումը չի պակասում։ Մի տարեկան հորթը սովորաբար քաշում է 275 կիլոգրամ (17 գ.)։ Հորթերի հասարակ մեծացման դեպքում, նրանք այդ հասակում ունենում են միայն 115-120 կիլոգրամ կենդանի կշիռ։ Յեթե զոյություն ունեցող միջին արժեքով գնահատենք այդ յերկու տեսակ կելակրած հորթերին, ապա կտեսնենք, վոր առաջինը արժե մոտավորապես 54 ռ., իսկ յերկրորդը—22 ռ. 50 կոպ.։ Հետեւարար, անցկացրած անման համար արված ծախսերը լիովին հատուցվում են հենց առաջին տարում։

Անասունի հասունացման արագացումը հասրավոր ե և այլ կերպ։ Մետիզացիայի միջոցով, այսինքն, կալմիկական կովերը անդիխական արագ հասունացող մասառ ցեղերի (շորիզորների կամ գերեխորդների) հետ զուգափորելով։ Այսպիսի մետիզացիայի միջոցով ստացվում ե լավ ածող մատղաց անասուն։ Ինչպես վերևում արդեն նշեցինք, խառնուրդային կենդանիները ստանում են մարմնի գեղեցիկ կերպարանք, մասնավորապես թիկունքի և մարմնի հստույքի լավ կազմվածք։

Կալմիկական կովին ձմեռը կերակրելու համար անհրաժեշտ ե ունաւ 20 ցենտներ խոտի պահեստ, 2 տարեկանից բարձր մատղաշի համար—18 ցենտներ, մի տարեկանից բարձրի համար—15 ցենտներ և մինչեւ 1 տարեկան հորթի համար—7 ցենտներ։ Այստեղ, ուր հնարտվոր ե, կոպիտ կերի մի մասը փոխարինել պաղարմատներով և սիլոսով շատ ոգտակար ե։ Մեկ գլուխ անասունի համար անհրաժեշտ ե ունենաւ վատ արոտատեղի 4 հեկտար, այն ինչ լավ արոտատեղից չ հեկտար։

Մսատու անասնապահության գլխավոր նպատակն ե զիրացրած լավ անասուններ շուկա հանելը։ Փիրացնել կարելի յեւ, թե անտեսության մեջ առաջ յեկած ե թե դրսից ձեռք բերված անասունը։ Ստկայն պետք ե հիշել, վոր յեթե անտեսության մեջ առաջ չի գալիս մսատու անասուն, ապա զիրացնելու համար ավելի ոգտավետ ե հասակավոր անասուն ձեռք բերել։ Այս տնտեսության մեջ, ուր անասունը առաջ ե

գալիս իր մեջ և մատղաշը ուժեղ կերպով գիրացվում ե և լավ զարգացած ե, ապա այնտեղ անասունի մատաղ հասակով գիրանալը ավելի ոգտավիտ կլինի։

Մեր պայմաններում առաջմ տարածված են մսի արդյունաբերության հետեւալ ձեռքը (1) անասունի միայն դաշտային արածումը առանց ուրիշ կերի կամ կիրով, (2) անասունին խոտով կերակրումը, (3) անասունը աեխնիկական ձեռնարկությունների անպետքությամբ՝ գինեգործարանների բոռդայով և ճակնդեղային գործարանների ժոմով կերակրելը։

Գիրացման ամենաեժանը հաշվում ե դաշտային արածեցման միջոցը, սակայն այդ ամենայերկարատե և ե տեսում ե գարնանից մինչև աշունը։ Դաշտային ձեռով գիրացնելու դեպքում ձեռնտու յեւ 6-8 տարեկան, նիհար, եժանագին յեղներ արածեցնելու Մեր դաշտերում գիրացնելու անասունի ամենալավ տեսակը «կալմիկական» ե, վորը ամենային հաշտությամբ դիմանում ե չորության, տաքության և ճանճերին։ Հասակավոր, առանց ատամների անասուններ արածեցնելով գիրացնել չի կարելի և նրան պետք ե գիրացնել միայն բորդայով և ժոմով։ Մատղայանացմամբ հասակավորներից վատ ե գիրանում։

Անասունի ամառային արածեցման միջոցով գերացնելը յերկարատե լինելու պատճառով կոլխոզի միջոցները այդ գործում մնում են շատ ժամանակով, վորը կոլխոզի համար այնքան ել արդյունավետ չե, Այդ պատճառով ել, միջոցների շրջանառությունը արագացնելու համար, փորձում ե անասունի արածեցման ընթացքում կերակրել նրան ուժեղ կերերով։ Ամերիկայում այս ձեր գործ ե ածվում շատ վաղուց և լավ արդյունքներ ե տալիս։ Յերկու տարեկան յեղները սովորական արածեցման ժամանակ ամեն որ միջին հաշվով ավելանում են 600-650 կը-րամ (1 և կես գրվ.), այսինչ արածեցման ընթացքում յեգիպացրուենով կերակրելու դեպքում անասունի քաշն ավելանում ե մինչև մեկ և կես կիլոգրամ (մոտ 4 գրվ.)։

Արածեցման ամրող ժամանակամիջոցում 2 ցենտներ (12 փութ) ուժեղ կերը բավական ե մի գլուխ անասունի համար։ Այդ ձեռով կերակրելու դեպքում հասրավոր ե միենույն արտատեղում արածեցնել 2 անասնախումբ։ Դաշտային ձեռով արածեցնող տնտեսությունների փորձը ցուցի ե տալիս, վոր մի գլուխ անասունը 6 ամիս ժամանակով արածեցնելու համար անհրաժեշտ ե մոտավորապես 18 ուրեմի, վորից 7 ռ. ծախսում ե արոտատեղի համար, 1 ռ. ինվենտարի, 2 ռ.

անասնաբուժական և չնախատեսնված ծախսերի համար 1 ռ. 50 կ.  
և յեթե գործը տարվում ե ուրիշների միջոցներով, մենաող անտառութեա-  
րի վարկի ոգտագործման համար—6 ռ. 50 կոպ., Սյապիսով արա-  
ծեցման մի որը մոտավորապես արժե 10 կոպ., Հնդունելով, վոր գիրաց-  
նելու համար վերցրած անասունի արժեքը հավասար ե 80 ոռոբլու, ար-  
դեն վիրացրած անասունը կոլխոզին կարգենա 98-100 ոռոբլի, իսկ շու-  
կայում գիրացրած անասունի մի գլուխը արժե 117-120 ոռոբլի: Հետևա-  
բար միջին հաշվով մի գլուխ անասուն գիրացնելը տալիս ե 20 ռ. ընդ,  
հանուր յեկամուտ:

Սրածեցման ժամանակ նախիրի նորմալ չտփը պետք է լինի 250  
գլխից վոչ ավելի: Այդպիսի նախիրը սպասարկում են 4 հովիֆլուեր: Հե-  
տեաբար մի այդպիսի նախիր գիրացնելոց կոլխոզը ստանում ե 5000  
ոռոբլի ընդհանուր յեկամուտ: Ամերիկական ձեռվ գիրացնելը՝ արածեց-  
ման ժամանակամիջոցում և ուժեղ կերով կերակրելը տալիս ե համա-  
րյա 2 անգամ ավելի յեկամուտ, վորի համար այդ ձեռի վրա անհրաժեշտ  
ե առանձին ուշադրություն դարձնել:

Անասունին բառդով կերակրելու դեպքում, կերակրելու մի որը  
կարծենա մոտավորապես 60-70 կոպեկ: Կերակրելու այս ձեռ ձեռնտու-  
յե գլխավորապես զինեգործարաններին, գործարանի մասցորդները—բառ-  
դան ոգտագործելու համար:

Բավական հաճախ գործ ե ածվում և մեծ արդյունք ե տալիս ձմեռը  
միայն խոտով կերակրելը: Դաշտային անասունը այս դեպքում հաջո-  
ղությամբ գիրանում ե բաց ողում կամ ծածկույթի տակ: Այս դեպքում  
յեզները մի որում ավելանում են մինչ 800 գրամով (2 գրվ.): Սակայն  
կերակրման այս ձեռ ձեռնտույթ միայն այն դեպքում, յերբ անտեսու-  
մար ծախսվում ե 22-25 ցենտներ:

Այս տեղերում, ուր եժանազին և լավ արոտատեղիներ չկան ու  
կան մեծ չափով հարդային կոպիտ կերեր, անասուններին (յեղներին) 3  
ամսվա ընթացքում գիրացնում են հետևյալ կերպ:

## Մի որում տալիս են.

Ենթի անունը	1-ին ամսում	2-րդ ամսում	3-րդ ամսում
Խոս . . . . .	4 կելով., (10 գրվ.)	6 կելով., (15 գրվ.)	8 կելով., (20 գրվ.)
Հ ա ր դ . . . . .	6 > (15 > )	4 > (10 > )	2 > (5 > )
Մ դ ե ղ . . . . .	4 > (10 > )	4 > (10 > )	4 > (10 > )
Տրորած գարի .	2,4 > (6 > )	4 > (10 > )	3,2 > (8 > )
Արևածաղկ. քուապ	2 > (5 > )	1,6 > (4 > )	1,2 > (3 > )

Տրորած գարին կարելի յե փոխարինել տրորած յեգիպատացորենով  
Գիրացնելու ամբողջ ժամանակամիջոցում ծախսվում է՝

Կ Ե Ր Ի Ա Ն Ո Ւ Ն Ե	Վ ա ր ք ա ն	1 ցենտների արժեքը		Հ ն դ հ ա ն ու ր արժեքը	
		Բ.	Կ.	Բ.	Կ.
Խ ո ս . . . . .	5,6 ցենտ. (34 գ.)	1	36	7	70
Հ ա ր դ . . . . .	3,7 > (22 > )	1	—	3	66
Մ դ ե ղ . . . . .	3,7 > (22 > )	1	22	4	57
Տրորած գարի . . . . .	3,0 > (18 > )	5	61	16	83
Արևածաղկային քուապ .	1,5 > (9 > )	4	20	6	30
<b>Ընդամենը . .</b>		<b>39</b>	<b>6</b>		

Կերակրելու մի որը մոտավորապես արժե 43-44 կոպ.: Գիրացնե-  
լու այս ձեռ, կերակրելու արժեքի տեսակետից, բանում ե արածեցնելու  
առ տեխնիկական մնացորդներով գիրացելու արժեքի միջին դրությունը:

Կերակրելու կարգը լինելու յե հետևյալ կերպ. առաջին 2 ամիս-  
ները առավոտյան ժամը 6-ին պետք ե տալ մղեղի և ուժեղ կերի խառ-  
նուրդ, ժամը 10 ին ջրել, կես ժամից խոտ տալ, ժամը 4-ին—նորից  
նույն խառնուրդը, ժամը 5-6-ին—ջրել, յերեկոյան ժամը 6-ին խոտ և  
ժամը 9-ին—հարդ: Վերջին ամսվա ընթացքում առավոտյան ժամը 5-ին  
մղեղի և ուժեղ կերի խառնուրդ, ժամը 7-ին—խոտ, ժամը 10-ին—ջրել

ժամը 4 ին—նորից խառնուրդ և կես ժամից հետո նորից ջրել Գիշերը տալ հարդի կերակրելու ամբողջ ժամանակամիջոցում կերի վրա անհրաժեշտ և ցանել 5-6 կիլոգրամ ալ: Բացի աղից, ողտակար և նաև տալ անրացրած փայտածուխ: Փորձերը ցույց են տալիս, վոր 90 որվա ընթացքում այսպիսի կերակրումից անասունի քաշն ավելանում է 75-ից մինչև 80 կիլոգրամ և կերակրելու այս ձեզ հանդիսանում և ամենահամարակը, մատչելին և դրա հետ միաժամանակ ոգտագործվում և տընտեսության մեջ վոչ ապրանքային մթերքները—հարդ, պետք: Գիրացնելու գործում պետք և նշել նաև սիլոսային կերերը: Ցերեք ամսվա ընթացքում սիլոսային կերերով կերակրելուց անասունը ավելանում է 100-110 կիլոգրամ: Այս կերի մատչելի լինելու սասին արդեն առված և կաթնառու անասունների համար կեր ձեռք բերելու գլխում:

Ինչ վերաբերվում և մսառու անասունների շենքերին, ապա նըրանք կարող են լինել շատ թեթև, վորովհետև առանձնապես տաքություն չի պահանջվում: Գոմները կարելի յե կառուցել դարսանից, իսկ կտուրը կարելի յե ծածկել յիղիզնով, բայց լավ և կղմինդրով արդպիսի շենքը, մոտավորապես ամեն մի զլուխ անասունի համար կաթմենա 50 ու: Այս դեմքում կոլխոզը կազմակերպում և մսառու անառապահության խոշոր տնախառություն, շենքերը կարող են լինել ավելի հիմնական: անպայման ունենալ ջրմուղ և կերի բաժանման ու աղբի մաքրելու մեխանիկական հարմարություններ: Այս հարցում կոլխոզները պետք և ղեկավարվն կուսակցական ու խորհրդային որգանների ցուցմունքներով և վոչ մի դեմքում չպետք և թույլ տան հասարակական միջոցների իդուր վատնում:

## ՅԵԿԱՄՏԵՎՈՐ ԱՆՍԱՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անասնականությունը ընդհանրապես և նրա մսային ճյուղը մասնավորապես, վաղուց ի վեր հանդիսանում և բերկրամասի զյուղատնտեսության կարևորագույն ճյուղը: Հյուսիսային Կովկասէ զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, համատարած կունկուրվացուչը և խոշոր կոլխոզների կազմակերպումը թույլ են տալիս մինչ այժմ տեսնված և միայն սոցիալիզմ կառուցող յերկրում հնարավոր յիղած չափերով կազմակերպել մսառու անասնապահություն, ի նկատի առնելով անասնաբության մեջ մեր ունեցած դժվարությունները, մսառու անասնապահության գործը պետք և ստանալայն թափ և կարող և

ուժվել միայն կոլեկտիվ անտեսություններ կազմակերպելու միջոցով, ուր հնարավոր և ավելի արագ կերպով և լրիվ չափով պատրաստել կ երկու թե յերկար մասի միայն արևելյան ծառը մասեցի ընդարձակ տարածություններում, այլ նաև հացահատիկային հուշագրության ու տեխնիկական ձեռնարկություններում, ոգտագործելով դաշտաբուծության ու տեխնիկական ձեռնարկությունների կողմանակի մթերքները (բարդա, ժոմ): Առանձնապես մեծ նշանակություն և ունենալու այս մասնաճյուղը հացահատիկային խոշոր սովորովներում, ուր մեծ չափերով մնում են կոշտ կերեր:

Մսառու անասնապահության կազմակերպելու ժամանակ աչքի առաջ պետք և ունենալ հետեւյալը՝

1) Կոլխոզի արոտատեղիների և խոտհարքի տարածության համեմատ վորոշել համայնացված նախիրի հաստատ չափը: Ի նկատի առնեմարդագետիների կերակրային արժեքավորությունը և 1 հեկտարի վրա արածեցնելու սահմանված չափը չափելացնել: Ճշգրիտ հաշվի առնել գիրացնելու համար պետք յիղած կեր ստանալու հնարավորությունները,

2) Արոտատեղի լավ ու առողջ ջրով ապահովված լինելը.

3) Անասունը կոլխոզում ձմեռը պահելու շենքերի հարցը:

4. Նախիրի աղնվացման համար ցեղային ցուկեր բաժաննելու թե կուզ փոքր, սակայն աղնվացեղ անասուններից առանձին նախիր կազմակերպելը, ցեղային անասունների ավելորդները պետք և, վոր անասնապահության կոռպերացիայում հատուկ պայմաններով կոնտրակտացիայի յինթարկված լինի: Ներկայում ցեղային ցուկերը գնահատվում են 300-400 ոուրլի և համենայն դեպս նրանց արժեքը 250 ոուրլուց պակաս չի լինելու:

Մսառու արդյունավետ կոլեկտիվ անասնապահության կորորացույն հարցերից մին և զոռաբինիկական և անասնաբուժական մինիմումի իրացործումը: Անասունի վորակի բարձրացումը հնարավոր և միայն անասնապահության բոլոր կանոնների կատարմամբ, ինչպես որինակ՝ յերբ միայն ցեղային լավ արտադրողներ ցուկեր կը կկեն, յերբ անասուններին թույլ են տալիս միայն վորոշ հասակից հետո գուգավորվել, յերբ մատղաշը լավ և կերակրում և այլն:

Միաժամանակ անհրաժեշտ և ամեն կերպ պայքարել վարակիչ հիվանդությունների գեմ: Դրա համար կոլխոզները պետք և առողջացնեն վարակված արոտատեղիները, ունենան անասունների գերեզմանոց, իսկ

հարկ լիղած դեպքում անց կացնել անասունների ընդհանուր նախագործացման պատվաստում: Հնարավորության սահմաններում պետք է հաճախ հրավիրել անասնաբուժին անասունները քննելու համար և հլուկել, փորպեսզի տնտեսության դրսից վարակում ներս չբերվի: Պետք է միշտ հիշել, վոր հիվանդությունից նախագործացնելը հեշտ է, քան նրա բժշկելը:

## ՄՍՅԻՆ ԱՆԱՍՈՒՆԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Մսատու անասունի վաճառքի հարցը հանդիսանում է գլխավոր հարցերից մեկը: Անասունի վաճառումը պետք է կատարել կոնտրակտացիալի, ոյսինքն միս մթերող պետական և կոռպերատիվ կազմակերպությունների հետ պայմանագիրը կնքելու միջոցով: Հստ այդ պայմանագրի, կոնտրակտացիա անցկացնող կազմակերպությունը, անասունի քանակին համեմատ տալիս է կոլխոզին անասունները գիրացնելու կեր: Կոնտրակտացիայի հիմնական նպատակը, դա մատղաշներին մորթելուց ու անիմաստ վատնության տալուց ազատելու են: Կոլխոզներն առաջին հերթին կոնտրակտացիայի պետք է յենթարկեն ամբողջ ապրանքային անասունները և դրանով ապահովեն անասունների նորմալ աճումը և շուկային մոով մատակարարելը:

Այն դեպքում, յերբ կոլխոզն իր աշխատանքը հիմնավորում է դըրմթերող կազմակերպություններում անասունների վաճառքը կոնտրակտացիայի յենթարկելուց, կոլխոզը կոռպերատիվ կազմակերպությունների և ուրիշ կոլխոզների հետ պայմանագիր կնքի նրանցից անասուն ստանալու համար: Մսատու անասնապահության զարգացման նպատակով պետք է, վոր կոլխոզը իր բոլոր հնարավորությունները ոպագործի իր աշխատանքները մոտակա սովորությունների և խորհրդային մսային տնտեսությունների հետ կարգավորելու նպատակով, վորոնք նրան մեծ ոգուտ կրերեն մսային անասնապահության զարգացման դործում:

## Դ. Վ. ԲՈԼԴԻՐԵՎ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՐ

# ԽՈԶՄԲՈՒԺԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԸՀՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԽՈԶՄԲՈՒԺԱԿՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ  
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Խոզմաբուժությունը հեղափոխությունից առաջ, այլ և այժմ նույնիսկ չյուսիսային կովկասում յերկրորդական տեղ է բռնում անասնապահության մյուս ճյուղերի մեջ: Նա թե իր քանակով և թե վորակով յետ և մնացել մյուս ճյուղերի զարգացումից: Իմպերիալիստական և քաջաքացիական կոլխոզների ժամանակ և անբերրիությունից խոզմաբուժությունը խիստ կրաքատվեց: 1913 թվին յեղած 2 միլիոն 77 հազար գլուխ խոզերից 1922 թվին մնացել ել միայն 193 հազար գլուխ, կամ մեկ տասերորդական մասից ել պակաս: Ներկա ժամանակ, այսօրնքն 1930 թվի հունվարի 1-ին, հաշվում ե ավելի քան 900 հազար գլուխ, վորը կազմում է մինչպատերազմյան քանակի կեսից պակաս:

Խոզերի քանակության մեծ մասը ընկնում է կուբանի շրջանին, վորտեղ նրանց թիվը հասնում է մինչ 200 հազար գլուխ: այնուհետև գալիս և Արմավիրի շրջանը, վորտեղ կա մոտ 180 հազար գլուխ: ապա Դոնի շրջանը՝ 120 հազար և Ստավրոպոլի շրջանը՝ 98 հազար գլուխ:

Ազգաբնակչությանը խոզով ապահովելու կազմից մենք խիստ յետ ենք մնում ուրիշ յերկրներից: Ազգաբնակչության ամեն մի 100 շնչին Դանիայում ընկնում է 88 գլուխ խոզ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 48, Գերմանիայում՝ 29 գլուխ, Ֆրանսիայում՝ 14, ՌՍՖՌ՝ ուռմատ՝ 10, իսկ Հյուսիսային կովկասում միայն 9 գլուխ:

Շատ գեպքերում Հյուսիսային կովկասում բազմացնում են վաչտեսակավոր, վաշտ տեսակի և ուշ հասունացող խոզեր: Այդտեսակի խոզերը թեթև քաշ են ունենում և մեկ-մեկ և կես տարեկան հաստակում նրանց քաշը հազիվ հասնում է 50—60 կիլոգրամի (3-4 փթի): Միան ել շատ սակավ և լինում:

Խողերի վորակը կախված ե ինսամքից, մնունդից և պահելուց: Անհատական տնտեսություններում խողանոցները սովորաբար անբարեկարգ են լինում, իսկ վորակն կեր, գործ են ածում հացահատիկների, տեխնիկական արտադրության տականքները և նույնիսկ ծղոտը: Պըտուղներով և արմտիքներով խողերին համարյա չեն կերակրում:

1923 թվից խողաբուծությունը Հյուսիսային Կովկասում սկսում է քանտկորեն վերականգնվել և վորակապես բարելավվել, 1925 թվին Անդիհայից Հյուսիսային Կովկաս են ներմուծված անզիկական տեսակի խոշոր սպիտակ աղնվացեղ արուներ (լորյակներ): Դյուղացիները շատ շուտ համոզվեցին, վոր անկասկած շահավետ ե տեսակավոր խողերի բազմացումը և հետզհետե սկսեցին տեղական հասարակ խողերին բեղմանվոր անզիկական աղնվացեղ արուներով: Խողաբուծական չորսամյա աշխատանքների հետևանքով, մանավանդ Արմավիրի և Կուբանի շըրջաններում, բոլոր ուղղությամբ ստացվել են խոշոր նվաճումներ, այն ե՝

1. Խողերի ամբողջ նախիրների խոշոր մասը հիշյալ շըրջաններում բարելավված են անզիկական խոշոր տեսակի արյունով:

2. Զգալիորեն աճեց աղնվացեղ նյութեղենի քանակությունը: Կան ույուններ, վորոնք կարող են ցեղային խողեր մատակարարել նույնիսկ ուրիշ վայրերի:

3. Կառուցված են յերկու բեկոնային գործարաններ. մեկը Արմավիրում, վորը տարհկան վերամշակում ե մինչ 120 հազար գլուխ և մյուսը Կրասնոդարում—45 հազար գլմի համար:

4. Խոշոր աշխատանք ե տարված բնակչությանը ծանոթացնելու խողերի բեկոնային կերակրման հետ և խողաբուծության դարեւոր դից վերջնին անցնելու համար:

Հյուսիսային Կովկասում ունի բոլոր բարենպաստ պայմանները խողաբուծության գարգացման համար: Յերկրամասի (կրայ) հացահատիկային տնտեսություններում ստացվում են շատ տականքներ և ցածր տեսակի հացահատիկ, վորոնք շահավետ կերպով կարող են ոգտագործվել վորակն կեր խողերի համար. իսկ յեգիպտացորդնի մշակումը հնարավություն ե տալիս խողաբուծությունը զարգացնելու հսկայական չափերով: Հյուսիսային Կովկասում յուղապահներա-գործարանների աճող թիվը նույնապես նպաստում ե կուլտուրական խողաբուծության զարգացմանը կաթնային առականքների միջոցով, վորոնք լավագույն կեր են հանդիսանում բեկոնային կերակրման և ցեղային խողաբուծության համար: Բացի դրանից, յելկրամասում ահազին տականքներ են ստաց-

վում աղորիքալին և տեխնիկական արտադրություններից, վորոնք նույնպես հաջողակամք կարելի յի ոգտագործել խողերի կերակրման համար: Վերջապես, անտառալին տնտեսություններում խողերը կարող են կերակրվել կազինով (ժոլուղ կամ որեխ), անտառային խնձորներով (կիսլիցի), վորոնք լավ վորակի միս և ճարպ են տալիս խոզին:

Հաշվի առնելով այս հանգամանքները, կառավարությունը նախատեսնում է հնգամյակի վերջին (1932-33 թ.) բացի գոյություն ունեցող յերկու բեկոնային գործարաններից, կառուցվել և յերեք հատ նման գործարաններ, մեկը Միլլերովում, մյուսը Սալսկում և յերրորդը՝ Ստավրոպություն: Այդ գործարանների շուրջը 60—100 կիլոմետր տարածության վրա զարգացվելու յի բացառապես բեկոնային խողաբուծություն: Ինչ վերաբերվում ե բեկոնային գործարաններից հետու գըտընվող ռայոններին, նույնպես և կենտրոնական քաղաքներին մոտ ընտառի ու այլուններին, ուղարկելու համար այդ տեղերում կած ուղարկելու յի ճարպային և կիսաճարպային խողաբուծություն: Այսպիսով Դոնեցկի, Շախտի, Սալսկի Ստավրոպությունի արևմտյան մասերը, Կուբանի և Արմավիրի ամբողջ շըրջանները հատկացված են մասեր, Կուբանի և Արմավիրի ամբողջ շըրջանների արևմտյան մասերում, կուբանային գործարանների կառուցված անմասներում կառավագային կառավագային խողաբուծության: Իսկ Դոնեցկի, Շախտի և մասամբ Սալսկի, Ստավրոպությունի, Թերեքի շըրջանների արևելյան մասը և ամբողջ Դոնի շըրջանը հատկացված են ճարպային և կիսաճարպային խողաբուծության շըրջաններում կառուցված անմասներում կառավագային գործարանների կառուցվումը կամանջում ե, վորպեսզի հիշյալ շըրջաններում նախորոք սկսվեն նախապատական աշխատանքները թի գոյություն ունեցող և թի կապատրաստական աշխատանքները անհամաժեղաց քանակությամբ հուսուցվելիք բեկոնային գործարանները անհրաժեշտ առողջություն և ամուսնություն կամար և այն ել այնպիսի հումուսություն, վորը կարողանա տալ առաջնակարգ արտադրանք արտասահման արտածելու:

Մինչ այժմ անհրաժեղաց քանակությամբ բեկոնային խողերի հիմնական մատակարաբունները անհամաժեղաց անտեսություններն ենին. բայց մոտ ապագայում, Հյուսիսային Կովկասի համատարած կոլեկտիվացման հետևանքով, մատակարաբունները լինելու յին բացառապես կոլեկտիվացման բարեկալման և նրայնեկամուտի բարձրացման ուղղությամբ ձեռք առնված միջոցները կոլեկտիվ անտեսություններում կենսագործվում են զգալիորեն հեշտ, քան անհամական տնտեսություններում: Այլ և ինքը, խողաբուծությունը կոլեկտիվում ավելի շահավետ կինի, քան անհամական տնտեսության մեջ Խոշոր, կոլեկտիվ խողանոցի կառուցման արժեքը ամեն մի գլխին ավե-

Քի քիչ և ընկնում, քան յեթե այդ խողանոցը կտորուցվի անհատականի ձեռքով; Սակավ և լինում, յերբ չքափոր-միջակային տնտեսությունը լավ խողանոց և ունենում, քանի վոր դա նրա ուժերից վեր ե: Կոլխոզում տնտեսական կերպով են ոգտագործվում աշխատող ձեռքերը: Կոլխոզը, պետական կամ կոռպերատիվային որդաններում կոնտրակտացիայի լինթարկելով իր խողերին, կարող ե վարկ ստանալ կառուցման, ցեղային խողեր ձեռք բերելու համար և այլն: Կոլխոզում միայն կարելի յե իրագործել խելացի կերպում և ճիշտ խնամք, մասնագետ գործառնութես—զոտակինիկի ղեկավարությամբ: Զարգացած խողաբուծության ղեպքում կոլխոզը կարող ե մեծ պարտիաններով ունենալ միատեսակ մթերքներ, հետևապես և ավելի շահավետ կերպով ծախել այն: Այս թե ինչու անասնաբուծական կոռպերացիան նախագծել ե մոտավագայում համայնացնել մինչ 210 հազար գլուխ եգ խողեր և կաղմակերպել Հյուսիսային կովկասում 40 հատ խոշոր խողաբուծական կոլխոզներ:

## ԽՈՂԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՃԵՄՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Խողաբուժությունը բնակչության կողմից պետք ե մեծ ուշադրության արժանանա: Վորովինետե խողը գյուղատնտեսական կենդանիներից ամենայեկամտավորն ե:

1. Խողը ամենաձեռնտու կենդանի մեքենա յե զանազան տականքներ ու կերերը ժողովրդական սննդառության արժեքավոր մթերքների —մսի, ճարպի վերամշակելու համար: 6-9 ամսական հասակում նա արգեն շուկայի ապրանք (բեկն) ե տալիս:

2. Լավ խնամքի և կերակրման ղեպքում խողը 12-14 ամսական հասակում բեղմնավորվում ե: Մյուս կենդանիներից նա տարբերվում ե մեծ բերրիությամբ և արագ աճմամբ: Այս հանդամանքը թույլ ե տալիս արագորեն զարդացնել խողաբուժությունը տուանց առանձին խոշոր նախնական ծախսերի:

3. Խողը մյուս բոլոր կենդանիների համեմատությամբ համարյա ամենալավ կերպով վարձատրում ե իր կերի և խնամքի համար: Որինակ, մի կիլոգրամ միս ստանալու համար, խոշոր յեղյուրավոր անտունին պիտի տալ 12-15 կիլոգրամ հացահատիկ կամ այլ կեր, վորն իր սննդառությամբ հավասար լիներ այդ քանակությամբ հացահատիկն: Վոչխարին պետք ե տալ —8-10 կիլոգրամ, իսկ խողին միայն 4-5

կիլոգրամ, Հետևաբար, խողի միսը տնտեսությանը 2-3 անգամ եժան են նստում, քան տավարի, կամ վոչխարի միսը:

4. Խողը տալիս ե մի շարք արժեքավոր հումույթ,—մաղ, աղիք, արյուն, վորից արյունե ալյուր (կրօնյահա մսկա) են պատրաստում: Վերջապես խողի կաշվից պատրաստում են թանդարժեք տեսակի կաշիներ: Իսկ այժմ միջոց են գտել, վոր խողի կաշվից նույնիսկ պաղոշ են պատրաստում: Վերջերս կառավարական դիմում եր հրատարակված, վորպես մորթելիս կաշին անպայման մաշկվի:

5. Խողաբուժության վրա ծախսվող փաղերը ավելի արագ են շըրջանառություն կատարում, քան խոշոր յեղյուրավոր մաացու տնտեսուն-ների բազմացման ղեպքում:

Շնորհիվ այն բանի, վոր խողն ուտում ե ամեն տեսակի կեր, նըրան կարելի յե կերակրել խոհանոցի թերմացքով, բոստանի և բանջարանոցի մացորդներով: Բացի այդ, խողը շատ լավ կերպով ոգաագործում ե առվույտով կամ լուցերնով ցանված արոտաեղներով: Հաշված ե, վոր մի հեկտար լուցերնից, յեթե նրանով կերակրենք խողին, կարելի յե ստանալ մինչև 1640—1680 կիլոգրամ (100-110 գութ) խոզի միս: Այն ինչ մի հեկտար յեգիպտացքորենը տալիս ե միայն 500-600 (30-40 գութ) կիլոգրամ միս:

Բեկոնի համար խողերի աճեցման փորձը ցուց ե տալիս, վոր այն ղեպքում, յերբ կոլխոզը գոճիներին (պօրօքայ) կերակրելու համար կեր ե գնում (2 ամսական գոճին արժեն 10 ոռութի), ապա մի խողը, բեկոնային գործարան հանձնելու ժամանակ տնտեսությանը նստում ե 30 ոռութի: Միջին վորակի բեկոնային խողի մասի արժեքը յեթե հաշվելու լինենք փութը (16 կիլոգրամը) 6 ոռութի 50 կոտեկ, մի խողը միջին թըվով կտա 35-36 ոռութի: Յեթե միսը բարձր վորակի լինի, ապա մի խողի համար կարելի յե ստանալ 40 ոռութի: Այսպիսակ բեկոնային 1 խողի վրա ծախսված կերի վարձատրությունը տատանվում ե 5 ից մինչև 10 ոռութի միջև: Ամեն մի միջնակարգ կոլխոզ, բաղկացած 2-3 հազար շնչից, մի տարվա ընթացքում կարող ե կերակրել մինչև 1000 գլուխ բեկոնային խողեր և ունենալ 6-ից 8 հազար ոռութի զուտ յեկամուտ

## ԽՈՂԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խողաբուժությունը ձեռնտու յե միայն այն ղեպքում, յեթե նրան բազմացնում են խոշոր քանակությամբ և այն ել վոչ թե համարակ,

այլ ցեղային խոզեր: Մեր հասարակ խոզը պահանջկում չե կերի և խը նամքի վերաբերմամբ, տարրերվում ե իր բազմացմամբ, բայց նրա պակասություններն ավելի յեն, քան առավելությունները: Հասակովնա փոքր ե, վուկրոտ, նիհար, դանդաղ ե աճում, վատ ե կերակրվում, վատ ե ոգտագործում կերը, տալիս ե կոշտ միս: Այն ժամանակ, յերբ ցեղային խոզը մեկ տարեկան հասակում միջին թվով կշռում ե 165 կիլո-քրամ (10 փութ), հասարակ խոզը կշռում ե վոչ ավելի 50-65 կիլոգրամ (3-4 փութ):

Այսուամենայնիվ հասարակ խոզերը արժեքավոր նյութ են ներկայացնում կուլտուրական տեսակների հետ բեղմավորելու համար: Այդպիսի բեղմավորությունից ստացվում ե լավ, տոկուն սերունդ վորը, բավական արագ և մեծանում (8 ամսական հասակում այդպիսիների բաշը հասնում ե մինչև 80 կիլոգրամի), լավ կերակրվում, ձեռնտու կերպով ոգտագործում ե կերը և տալիս ե բավական լավ, բեկոնի համար պետքական միս:

Խոզերի ավելի հարմար տեսակը, վորը լավագույն բեկոնն ե տախիս, դա անգիտական սպիտակ խոզն ե: Նա ունի յիշկար իրան, հարթ և լայն մեջքով և խոշոր կողոսկրներով, ուժեղ, բարց վոչ այնքան բարձր վոտներով: Շատ բերքի յե և տարեկան տալիս ե 16-20 ձագ, բավական արագ աճում ե: Մի տարեկան հասակում կենդանի քաշը հասնում է 165-240 կիլոգրամի (10-15 փթի): Լավ կերակրված հասակավոր խոզերը քաշում են մինչև 350 կիլոգրամ: 100 կիլոգրամ կենդանի քաշից ստացվում ե 82-85 կիլոգրամ միս և ճարպ: Միսը և ճարպը բարձր վորակի յ թե վորքան ձեռնտու յե ցեղային խոզեր բազմացնելը, յերկում ե ճետելավից: Մի կիլոգրամ լավ միս կամ ճարպ ստանալու համար պետք ե ծախսել հայահատիկային կեր.—

Անգլիական խոզի համար . . . . . 4-5 կիլ.

Մետիս տեսակի համար . . . . . 7 և կես »

Հասարակ խոզի համար . . . . . 12-12 »

Այդ պատճառով անհրաժեշտ ե հնարավոր յեղածին չափ բազմացնել ցեղային խոզեր և տեղական հասարակ խոզերին բեղմավորել միաժամ տնօլիական խոշոր, սպիտակ տեսակի արուների հետ: Մի արուն (խրյակը) կարող ե սպասարկել մինչև 60 եգերի:

## ՅԵՂԱՑԻՆ ԽՈԶԵՐԻ ՀՈԿՈՒՄԸ

Առանձնապես կարևոր նշանակություն ունի կոլխոզում ցեղային կենդանիների, մասնավորապես ցեղային արու խոզերի ընտրումը: Եղ նախրի և ցեղային արուների ընտրությունից խոշոր չափով կախված ե նաև թե ցեղային և թե ոգտագործելի խոզաբուծության հաջողությունը: Ավելի լավ ե թանկ վճարելու բայց ձեռք բերել իսկապես լավ արուների մի վորես հայտնի խոզաբուծական կալանցից: Արու խոզ (խրյակ) գնելիս անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել նրա ասողջության, ուղիղ և ամուր կազմվածքի և բնավորության վրա: Նա պետք ե ժիշտ պնդակագիր, լայն և ունենա ամուր և ուղիղ վոտներ: Մեջքի վրա թիւ կունքների մոտ ծալքեր չպետք ե լինեն: Կուրծքը պետք ե լայն լինի և խոր ընկած: Մաղերը պետք ե լինեն խիտ, նուրբ և փայլուն:

Եղ խոզը պիտի լինի յերկարուն, ամուր կողերով, լայն և խոր ընկած կրծքով, ունենա ուժեղ վատներ և լայն հետույք: Նա պետք ե բերքով լինի, տարբերվի իր կաթնատվությամբ, վորպեսզի կարողանա կերակրել իր ձագերին: Անհրաժեշտ ե, վորպեսզի կուրծն ունենա 12-ից վոչ պակաս պուտուկներ: Այն եգերը, վորոնք 8 ձագից պակաս են ծընում և բավականաչափ կաթ չունեն, անմիջապես պետք ե բրակ անել:

## ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ

Տաս ամսականից յերիտասարդ արու խոզերին չպետք ե թողնել հարաբերություն ունենալու, Որական մի անգամից ավելի թույլ չպետք ե տալ հարաբերություն ունենալու: Հարաբերության ժամանակաշրջանում սովորական կերից բացի, պիտի տալ որական 800 գրամ (2 Փ.) վարսակ: Անհրաժեշտ ե արու խոզին ամեն որ բաց թողնել զբոսանքի առանձին բակում, իսկ ամառներն արածեցնել առանձին հատուկ արոտափում:

10 ամսականից յերիտասարդ ցեղային եղ խողին չպետք ե թողնել հարաբերություն ունենալու: Հաջող բեղմավորման դեպքում խոզը հղի յա մոււմ 3 ամիս, 3 շաբաթ և 3 որ (115-120 որ): Հղի ժամանակ խոզին հնարավորություն պետք ե տալ շարժվելու, զրունելու և հնարավորին չափ կերակրել: Ծնելուց յերկու-յերեք շաբաթ առաջ նրան պետք ե առանձնացնել մյուս խոզերից մի հատուկ տեղ: Ծնելուց յերկու որ առաջ ավելի լավ ե նրան մոռւրից բաց չթողնել:

Դետք ե թողնել միայն ուժեղ ձագերին: Ավելի լավ ե ուսենաց 8 առողջ, ուժեղ ձագեր, քան 12 թուլակազմեր: Ծնելուց 2 շաբաթ հետո, ձագերին կարելի յե կերակրել կովի յեփած կաթով: 3-4 շաբթական հասակում խողի ձագերին կարելի յե տալ ծեծած վարսակ կամ դարի խոկ անարատ կաթը կամաց կարելի յե խառնել սերը քաշած գոլ կաթով: Անարատ կաթից սերը քաշած կաթի անցնելը պետք աստիճանաբար կատարվի:

6-8 շաբթական ձագերին ծծից կտրում են և կամաց-կամաց ընտելացնում են զանազան տեսակի կերերի: Ոգտակար ե, յեթե կերի մե (ամեն մի ձագի համար) խառնենք մի կերակրի զդալ վուկրային ալյուր և կիր, իսկ կերի վրա թեթև կերպով աղ ցանենք, վորից ձագերը ունենում են ամուր վուկրներ և ավելի լավ են մեծանում: Լավ առվույտային արոտ, հացանատիկ և կաթնային մթերքներ—ահա մատաղ, առող խողերի ամենալավ կերը:

Ցեկամտավոր խողաբուծությունը հնարավոր ե մաքուր, չոր և վոր գլխավորն ե, տաք շենքում: Հասակավոր խողի համար իր ձագերի հետ միասին, խողանոցը պ ե տ ք ե լինի 3 և կեռքառակուսի մետր: Հատուկ կերակրվող խողերը 10-ական զլուխ տեղավորվում են մի-մի առանձին շենքում, ըստ վորում ամեն մի խոզին պիտի ե ընկնի 3 քառակուսի մետր տարածություն: Հատուկը լավ է ցեմենտով պատել և մի փոքր թեք շինել, վորպեսզի հեղուկային աղ տեղությունը մի կողմ հոսի: Խողանոցի յետի մասում կառուցվում ե քնարանը, վորտեղ պետք ե փոել ծղոտ կամ հարդ, վորն ամեն որ պետք ե փոյսել, վորպեսզի չոր լինի: Խողանոցը պետք ե լուսավոր լինի. պատուհանները պետք ե կրկնակի փեղկեր ունենան: Զմեռը պետք ե խողանոցը բավականին տաք լինի, վորովհետև ցրտի մեջ լինողը ավելի շատ կեր ե կորցնում: Հաշված ե, վոր ցուրտ տեղում, մի կերպորամ միս ավելացնելու համար, խողը գործ ե ածում մինչև 11 կիլոգրամ հացահատիկային կերեր, իսկ տաք տեղում՝ միայն 5 կիլոգրամ: Խողանոցի փակ ողը դանդաղեցնում ե կերակրումը. այդ պատճառով անհրաժեշտ է լավ ողափոխիչ (վենտելյացիա) սարքեր: Այս բոլոր պայմանները կարելի յե իրագործել միմիայն խոշոր կոլեկտիվ խողանոց կառուցելու դեպում:

Վորովհետև ցեղային խողերի կարգացման գործը պահանջում ե խողանոցին կից ունենալ եղ խողերի համար առանձին արոտատեղեր, ապա խողանոցը պետք ե կառուցել 250 եղ խողերի համար և վոչ ավելի:

Ի՞նչ կարքավորված խոշոր խողանոցի կառուցումը նստում ե 100-ից 125 սուբլի ամեն մի խողատեղը (ստանոկ): Խողերի հապուկ կերակրումն (սուկորմ) դեպում, շենքը կարելի յե կառուցել մի քանի հազար գլխի համար: Այդպիսի խողանոցում հեշտ ե հարմարություններ ստեղծել, վորոնք թեթևացնում են խնամք տանելու աշխատանքները:

Խողաբուծությունը հաճախ յենթակա յե խոզոր վնասների, զանազան վարակիչ հիվանդություններից, ինչպես որինակ, ժանտախտը (չումա), ըստը (ըստա) և այլն: Խողային հիվանդությունների մեծ մասի բուժման իսկական միջոցներ դեռ չկան: Զկան նաև նախապաշտպանման բժշկական լավ միջոցներ: Վարակումի դեմ պայքարելու միակ միջոցը դա անասնաբուժական մինչըմումի ամենախիստ կատարումն եւ Սրա մեջ ե մանում շենքի մաքրությունը, դեղնափեկցիան, վարակված կամ վարակման յենթակա խողերին խողանոցից անմիջապես հեռացնելը և խիստ կարանտին սահմանելն այն խողերի վրա, վորոնք տընտեսությունը են բերվում դրսից:

## ԽՈՂԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Խողերին կերակրում են (սուկորմ) վորպես մսացու, ճարպացու և կիսաճարպացու: Մսացու խողին սկսում են կերակրել 5 ամսական հասակից և վերջացնում են 8 ամսական հասակում: Կերակրված այդ խոզի քաշը պետք ե հասնի 80-95 կիլոգրամի (5-6 վութ): Հասարակ խոզը ալի հասակում չի տալիս նման քաշ: Այդպիսի խողեր ստացվում են սիայն յերբ հասարակ խողերը բեղմնավորվում են անգլիական խոզը սպիտակ արուների հետ: Խոզի կերակրման այս ձևը կոչվում ե բեկոնային կերակրում, վորովհետև ստացված մսից պատրաստվում ե կիսապղի միս, վորն Անգլիայում հայտնի յե բեկոն կոչմամբ:

Խոզին վորպես մսացու կերակրելն ամենաձեռնտու կերակրումն եւ վորովհետև ջահել հասակում խողերն ամենալավ կերպով հասարացում են կերի համար, իսկ սա նշանակում ե, վոր մի կիլոգրամ ավելացող մսի համար պահանջվում ե քիչ կեր:

Բեկոն պատրաստելու համար անպետք են.—1) վոչ տեսակավոր խողերը, 2) հղի և կաթնատու խողերը, 3) 10 ամսականից մեծ խոզերը, 4) 70 կիլոգրամից (4 և կես փութ) ցածր և 115 կիլոգրամից (7 փութ) բարձր քաշ ունեցողները, 5) ճարպոտ, բայց լղար խողերը, 6) Միայն յեգիպատացորդնով ե քուսպով կերակրվածները, 7) չկրտված արու խո-

զերը, 8) վերք, արյունահոսություն և մարմնի արտաքին մտսերու ալ վնասվածքներ ունեցող խողերը:

Խողերին մսացվի կերակրելու համար պահանջվում ե մոտ 10 կիլոգրամ յեգիպտացորեն, 50 կիլոգրամ գարի կամ սորբո, 35-40 կիլոգրամ արեածաղկի քուսպ և 500 կիլոգրամ հյութալի կերեր (ճակը դեղ):

Ցեթե չեն ուզում ստանալ ճարպոտ միս և հատիկավոր ճարպ ապա դիմում են, այսպես կոչված, կիսաճարպային կերակրման: Կիսաճարպային կերակրման համար կարելի յե ոգտագործել միմիայն առակալոր խողերին (մետիսներ) և ջահել հասակում, մոտավորապես 8 ամսական, այսինքն այն ժամանակ, յերբ կենդանին դեռ չի ավարտիր զարգացումը և կարող ե մսով գիրանալ և կուտակել հատիկավոր ճարպ: Կերակրել սկսում են, յերբ խողի քաշը հասնում է 80 կիլոգրամի (5 փութ), մոտավորապես 8 ամսական հասակից և դադարել նում են, յերբ քաշը կրկնապատկվում է: Կերակրման ժամանակ տըլ վում ե եժան և զանազան տեսակի կերեր: Որական գիրացումը պիտինի մոտավորապես կես կիլոգրամ: Ընդամենը կերակրման ժամանակում ե մինչև 400 կիլոգրամ ուժեղ կերեր Յեգիպտացորենային կերպետք և կազմի ընդհանուր կերի յերեք քառորդից վոչ ավելի, վորպեսի ճարպի վորակը չվատանա:

Ճարպային կերակրումն ավելի յերկար ե տեսում, քան նախօն յերկուսը և տեսում ե մոտավորապես 4 և կես—5 տմիս: Առաջին շրջանու տալիս են ամենաեժան կերեր, վորովհեան խողերն այդ ժամանակ կը ըի լավ ու վատը չեն փնտում: Վերջին շրջանում պիտք ե տալ այս պիսի կերեր, վորպեսզի ճարպը (սալո) չփշանա, որինակ, գարի, սիսուի ալյուր: Կերակրման ամբողջ ընթացքում պահանջվում ե սինչև 80 կիլոգրամ ուժեղ կերեր:

## ԿԵՐԻ ՀԱՅԹԱՅՑԹԱՊԻՄԸ

Կոլխոզներում յեկամտավոր, արդունաբերական խողալուծության կազմակերպումը հնարավոր ե միայն կերի հարցի ճիշտ լուծման դերքում: Կարենը ե անտեսության մեջ մտցնել ցանքստափոխություն, ցանելով արմտիքներ և կազմելով արհեստական արոտներ:

Առանձին նշանակություն ունի խողերին արոտատեղիներով պահելը: Արոտային կերակրումը ամրապնդում ե կենդանու առողջությունը

Առանձնապես նա ոգտակար ե աճող խողերի համար: Արոտային կերակրման շնորհիվ եժանանում ե խողերի կերակրումը և ինսամքը: Արոտատեղերը ճիշտ և հավասարաչափ ոգտագործելու համար կառուցվում են տեղափոխող ցանկապատներ, վորոնցով պատում են արածելու համար նշանակված արոտամասերը: Խողերի ամենասիրած արոտը հանդիսանում ե առվույտը (լյուցերն): Առվույտը, մի հեկտարից շատ կերատակը, խիստ եժանացնում ե խողի արժեքը, նպաստում ե եղերի կաթնառատությանը, վորն իր հերթին նպաստում է ջահել խողերի արագացմանը: Յեկամտավոր բեկոնային խողաբուծությունը, առանց առվույտային արոտատեղերի խոշոր չափերով համարյա՛աննարին եւ Ամեն մի 25-30 խողի համար անհրաժեշտ ե ունենալ 1-ական հեկտար առվույտային արոտ:

Հյուսիսային կովկասում խողերի համար ուրիշ կերեր են հանդիսանում—յեգիպտացորենը, գարին, ճակնդեղը, դդումը և սորգոն: Սորգոյի հատիկը լավ կերպով ուղղում ե յեգիպտացորենի անցանկալի աղղեղությունը, խողերի հատուկ կերակրման դեպքում: Կերերի մթերելու գեղքում նկատի պետք ե ունենալ, վոր բացի այն կերերից, վորոնք անհրաժեշտ են հատուկ կերակրման համար, անհրաժեշտ ե ամեն մի ցեղային արոտ և եգ խողի համար ունենալ 650 կիլոգրամ ուժեղ կերեր և մի տանն հլութալի կերեր:

## Ս Պ Ա Ռ Ո Ւ Մ

Հյուսիսային կովկասում բեկոնային գործարաններ կառուցելու հետևանքով, խողաբուծության մթերքների ձեռնտու սպառումը լիովին կապահովվի: Յեկոնային խողի գինը սահմանված ե 16 կիլոգրամ կենդանի քաշի համար 6 ոուբ. 50 կոպեկից մինչև 7 ոուբ. 50 կոպեկ: Ճարպային և կիսաճարպային խողերի համար նույն գինն ե սահմանված, վորպեսզի այդպիսով նպաստվի բեկոնային խողաբուծության զարգացմանը:

Անասնաբուծական կոռպերացիան մթերումների ժամանակ դիմեց խողերի կոնտրակտացիային: Կոնտրակտացիան ընդգրկում է թե կոլխոզների, թե սովորողների և թե կոռպերացված բնակչության ապրանքային ամբողջ ավելցուկը: Կոնտրակտացիան կոպնի աճեցնելու և բարելավելու խողաբուծությունը Հյուսիսային կովկասում, վորովհետևիրենց խողերը կոնտրակտացիայի յենթարկած կոլխոզները Աստանում են կե-

բեր և դրամական ավանսներ խոզաբուծական տնտեսության բարելավման համար: Սովորաբար խողերին կոնտրակտացիայի յենթարկող կամ մակերպություններն անց են կացնում նույնպես խոզաբուծության բարելավում, պահանջելով կոնտրակտացիայի յենթարկվոծ խոզի տիրողից իրագործել անասնաբուծական—ընախոսատեխնիկական մինիմումը կազմակերպելով խոզաբուծական ցուցահանդեսներ և դասընթացներ:

Ցեղային խողերը նույնպես ունեն միանգամայն ապահով սպառում: Ցեղային խողերը մինչ 3 ամսական հասակը գնահատվում են կենդանի քաշի կիլոն 1 ո. 25 կոպեկից մինչև 1 ոուրլի 75 կոպեկ: Այդ հասակում խոզի ձագերը պետք է ունենան 24 կիլոգրամից վոչ պակասքաշ: Այդ հասակից վեր, հիշյալ արժեքի վրա ամեն որ ավելացվում է 40-ական կոպեկ՝ աճման համար: Ցեղային բոլոր խողերը կոոպերատիվային, կողեկտիվ և խորհրդային տնտեսություններում տմրացվում են անասնաբուծական կոոպերացիայի վրա և բաժանվում կոլխոզների միջև:

#### Գ. ՅԵ. ԿՈՒԶՆԵՑՈՎ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՑԵՑ

## ԲՐԴԱԾՈՒ ՅԵՎ ՄՍԱ-ԲՐԴԱԾՈՒ ՎՈՉԽԱՐԱ- ԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ

### ՎՈՉԽԱՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային կովկասի վոչխարաբուժությունը խոշոր, ընդհանուր պետական նշանակություն ունի, վորովհետեւ Հ.-Կովկասում պահպանվել և մերինոսային վոչխարների ամենաարժեքավոր տեսակը, վորոնց բուրդը գործ և ածվում թանգարժեք, նուրբ գործվածքների համար: Մեր գործարանների ամբողջ նուրբ բրդի մոտ յերեք-քառորդը ստացվում է Հյուսիսային կովկասից:

Մեր յերկրի բուրդավիերամշակման գործարանները հալրենական հումութով ծանրաբեռնված են միայն մեկ-տասներորդով: Այդ պահառով բրդի պահանջը հսկայական է:

Հյուսիսային կովկասի և ամբողջ յերկրի համար պակաս նշանակություն չունի նաև կոպտաբրդային վոչխարաբուժությունը, վորը մեր խոշոր քաղաքներին և արդյունաբերական կենտրոններին տալիս է լավագույն միս: Հյուսիսային կովկասի ներսում կոպտաբրդային վոչխարաբուժությունը ծառայում է զյուղացիական տնտեսության պահանջները բավարարելու համար: Մորթին գործ և ածվում մուշտակների համար, բուրդը՝ վալինկաների, գուլպաների, ձեռնոցների համար և այլն: Ազգային մարզերում (ոբլաստ), լեռնեցու ամբողջ հագուստը համարյա պատրաստվում է վոչխարի բրդից: Բացի դրանից, վոչխարները տալիս են արտածման (եքսպորտի) մթերքներ, ինչպես որինակ՝ սպիտակ պանիր:

Վերևում թված այս բոլորից պարզ է, թե վորքան հսկայական նշանակություն ունի վոչխարաբուժությունը՝ Խորհրդային՝ Միության ամբողջ ժողովրդական տնտեսության միջև:

Վոչխարը հանդիսանում է վոչ պահանջիստ կենդանիներից մեկը:

Ամենատղաքատ արոտատեղիները, վորոնք սակավ ոգտակար են խոշոր յեղջլուրավոր անասունների և ձիյերի համար, վոչխարները հիանալի կերպով ոգտագործում են, վորով և յեկամտավոր են դառնում: Լեռնային ալպիական արոտատեղիները, վորոնք սակավամատչելի յեն խոշոր անասուններին, հաջողությամբ ոգտագործվում են վոչխարների կողմից: Վերջապես, ձմեռ ժամանակ վոչխարները լավ ոգտագործում են ամենացածր կոպիտ կերերը—հարդը և ամենավատ տեսակի խոտերը:

Փարախներին վոչխարը խոշոր պահանջներ չի ներկայացնում, բավականանում ե ցուրա մարագներով, իսկ տափաստանային վոչխարը բուծության պայմաններում գործը շատ հաճախ յոլա յե գնում ուղղակի «զատիշկաներով»:

Հաշվի առնելով վոչխարի այդքան բազմակողմանի ոգտակատությունը և նրա անպահանջկոտությունը խնամելու և կերակրելու ժամանակ, կազմակերպվող կոլտողները պետք ե վոչխարին մեծ ուշադրություն հատկացնեն, քան այդ եր մինչև այժմ, մանավանդ, վոր վոչխարից բարձր յեկամուտ կարելի յե ստանալ միայն խոշոր, համայնացված տնտեսության մեջ, տնտեսություն, վորն ունենա 1000 գլխից վոչ պակաս վոչխար: Այսպիսի հոտեր չքավոր-միջակ տնտեսությունները կարող են կազմել միայն այն ժամանակ, յերբ կհամախմբվեն կոլխոզում:

Զեռնարկելով վոչխարաբուծության կազմակերպմանը կոլխոզներում, անհրաժեշտ ե զարգացնել վոչխարի այն տեսակները, վորոնք ավելի յեկամտավոր են ավյալ վայրի համար:

Սնհաջող զարգացման, կամ անհարմար տեսակի զարդացման դեպքում, վոչխարաբուծությունը տալիս է չափազանց աննշան յեկամուտ:

Ուրիշ յերկների փորձից յերեսում ե, վոր վոչխարաբուծությունը կարող ե յեկամտավոր լինել, յեթե նա տարվի կուլտուրական կերպով, յեթե ընտրվի վոչխարի այնպիսի տեսակները, վորոնք տարբերվում են իրենց արագ մեծանալով, արագ մսով և բրդով: Ուրիշն միանգամայն հնարավոր ե մեզ մոտ ևս վոչխարաբուծությունը յեկամտավոր դարձնելը: Հարկավոր ե միայն մտցնել ավելի մթերքատու տեսակները և կազմակերպել վոչխարաբուծական խոշոր կոլխոզներ:

## ՎՐՈՇԵԼ ՅԵՎ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ՎՈՐԽՄՐ ԶԱՐԴԱՑՆԵԼ

Վոչ ամեն տեղ և վոչ ամեն տեսակի վոչխար ձեռնառ յե զարդացնել: Այդ պատճառով Հյուսիսային կովկասի տարբեր ուայոններում

պետք ե լինում զարդացնել վոչխարների միայն վորոշակի, այս կամ այն տեսակը:

Լինկոլն վոչխարները, Խողոր արգյունաբերական և կուրորտային կենտրոններ ունեցող ուայոններում, ինչպես որինակ, Ռուսակի, Շախտ, Հանքային ջրեր, պետք ե զարդացվի շուտ հասնող մսաբրդատու վոչխարաբուծություն՝ տեղական վոչխարները անդիմական լինկոլն տեսակի դոչերի հետ բեղմավորելու միջոցով: Այդ տեսակը տարբերվում ե նըրանով, վոր շատ արագ ե հասնում, մեծանում: Հյուսիսային կովկասի փորձնական կայանի կատարած փորձերից յերեսում ե, վոր լինկոլն տեսակի դոչերից և վոլոշսկի մաքիներից առաջացած գառները յոթ ամսական հասակում, լավ կերակրելու դեպքում, ունենում են մինչև 50 կիլոգրամ (3 փութ) քաշ, այն ժամանակ, յերբ տեղական վոչխարները հասունացած ժամանակ հազիվ այդքան քաշ են ունենում: Զտարյուն, հասունացած դոչերը կը ունի 130-140 կիլոգրամ (8-9 փութ), իսկ մաքիները՝ 110-120 կիլոգրամ (7-7 և կես փութ): Միջին հաշվով, յերկու անգամ խողելուց հետո, մինչև 6 կիլոգրամ (15-16 փունտ) բուրդ եստացվում, իսկ վորոշ դոչեր տալիս են ուղարկում 12 կիլոգրամ (30 փունտ): Նրանց բուրդն ավելի բարձր փորակի յե լինում, քան վոլոշսկ վոչխարները և անհամեմատ շատ թանգ ե գնահատվում: Մորթին ևս, վորպես մուշտակացու, շատ հիանալին ե ստացվում:

Յոթ ամսական դառը կարելի յե 18 ոուրլով վաճառել (հաշվելով փութը և ոուրլի): Այդպիսի գառից ստացվում ե մինչ 2 կիլոգրամ (5 փունտ) բուրդ, վորը բռնում ե 3 ոուրլի 75 կոպեկ և հասունացած մաքին տալիս ե մինչ 6 կիլոգրամ (15 փունտ) բուրդ, վորը բռնում ե 7 ոուրլի 50 կոպեկ: Դուրս ե գալիս այսպես, վոր վոլոշսկի տեսակի վոչխարը լինկոլն տեսակի դոչեր հետ բեղմավորելիս տալիս ե տարեկան 29 ոուրլու ընդհանուր յեկամուտ, վորը յերկու անգամով գերազանցում ե վոլոշսկի վոչխարների տված յեկամուտին:

Նախագծված ե այդ տեսակներով բարեկալվել վոչխարը հետեւյալ շրջաններում—կուբանում, Արմավիրի շրջանում, Թերեքի շրջանի Հանքային Ջրերի, Սուվորինսկու, Յեսենտուպէկի և Գարյաշնուդսկու ուայոններում և Դոնի շրջանի Բատայսկի, Մեչուտինսկի, Նովոչերկասկի, Մյասնիկյան և Սավետինսկի ուայոններում:

Կարակուլի վոչխարը, վոչխարների մի ուրիշ տեսակը, վորը յեկամտավորությամբ արժանի յե առանձին ուշագրության, դա կարակուլ տեսակի վոչխարն ե: Այդ տեսակի վոչխարից վոչ այնքան մեծ յե-

Գալուստ ե ստացվում նրա մորթուց: Կարակուլի մորթին, նույնիսկ մի-  
ջին վորակի, գնահատվում ե 15-20 ոռոբլի, իսկ լավը—զգալի չափով  
ավելի թանգ: Ճիշտ ե, այս վոչխարի բուրդը սածը վարակի ին և զգալի  
չափով ավելի քիչ ե ստացվում, քան վոլոշսկի վոչխարից: Բայց դու  
դիմաց, վոլոշսկի տեսակի գառը 6 ամսական հասակում արժեք վոչ ավե-  
լի 8-10 ոռոբլուց և խնամելու համար ծախսեր ե պահանջում, իսկ կա-  
րակուլի գառը ծնելու ժամանակ հենց յերկու անգամ ավելի թանգ ար-  
ժե, չպահանջելով վոչ մի ծախս: Ահա թե ինչու նա այնուամենալինիվ  
վոլոշսկի տեսակի վոչխարից պակաս յեկամտավոր չե: Այդ վոչխարի  
բազմացումը կարևոր ե նաև նրա համար, վոր նա տալիս ե որտածման  
համար թանգարժեք ապրանք:

Կարակուլ տեսակի վոչխարը չտփաղանց անպահանջկոտ է: Նտ լավ անց և կացնում մեր ձմեռը և այն ել մարագներում և սակավ կերպվ: Այս տեսակը ամենամեծ ուշագրության և արժանանում Ստավրոպոլի շրջանի թուրքմենական, Բլագոդարնու և Գետրովսկու ույշոններում: Այստեղ տնտեսության պայմանները և կիման կարակուլի բազմացման համար ավելի հարմար են:

Կարակուլը հոտերով բազմացնելու դեպքում, հաջողությամբ կարելի յե պատրաստել պանիր (բրինզ), վորովհետև մաքիները, նրանց գառները մորթելուց հետո տալիս են այնքան կաթ, վոր նրանց կթելը միանգամայն ձեռնառու յե: Սա խոշոր չափով բարձրացնում ե վոչխարի յեկամտավորությունը:

Բացի վերոհիշլալ ռայոններից, կարակուլը պետք է բազմացնել Շախտի շրջանի, Որլիվսկի, Մորոզովսկի և Տագինսկի ռայոններում, Արմավիրի շրջանի, Գրիգորիավոլիսսկի և Կամենոբրուզսկի ռայոններում, Դոնի շրջանում—Աղովի, Կուչէնկայի, Ստարոմինսկոյ և Յելյոկի ռայոններում, Դոնեցկի շրջանում—Տարասովսկի, Կուբանի և Տագանրովսկի ռայոններում:

Կարտաշյի վոչխար. Հյուսիսային կովկասի լեռնային ռայոնների պայմաններում, ազգային մարզերում (որբոստ), կարտաշյի վոչխարը չունի իրեն մրցակից: Այդ պատճառով այստեղ պետք է բազմացվի հենց այդ տեսակը: Անկրաժեց և միայն բարձրացնել բրդի խուզումը և մորթելու կշիռը՝ լավագույն արտադրողների ընտրության միջնորդ:

Վոյուսկի վոչխար: Հյուսիսային կովկասի մնացած ռայոններում,  
բացառությամբ արևելյան ծայրամասերի, պետք ե բազմացվի վոլոշսկի  
վոչխար: Հասկանալի յե, փոր այս տեսակի վոչխարը ևս պետք ե բա-

զեկավել դոչերի համապատասխան ընտրությամբ։ Հյուսիսային Կովկասի արևելյան ուղղոնքներում, աղքատիկ արոտատեղիների և պահպանման գաժան պայմաններում, վոլոշսկի վոչխարն անփոխարինելի յե։ Ստամբուպուրի և Սալսկի շրջանների վորոշ կոլխոզները, բաղմայա ընտրության միջոցով կարողացել են զգալիորեն բարձրացնել կենդանի քաշը և բուդի քանակը։ Այսպես կոչվող անդրդոսի տիպի դոչերը հասնում են մինչև 100 կիլոգրամ կենդանի քաշի, իսկ մաքինները՝ մինչև 65 կիլոգրամի (4 վութ), վերջին ժամանակներս վոլոշսկի վոչխարի բարելավմանը մեծ ուշադրություն են դարձվում։ Անասնաբուծական կոռպերացիան ամեն տարի ընակչության միջև բաժնում է բարելավված վոլոշսկի դոչեր, մի տարի ընակչության միջև բաժնում է բարելավված վոլոշսկի դոչեր, մի քանի հազար գլուխ։ Հնգամյակի վերջում բարելավված դոչերով ծածքած պետք են լինի վոլոշսկի մաքինների կեսից վոչ պակաս։

Բացի այդ, Ուրուսի անասնաբուժական զայառի և են  
ձայն, այդ տեսակի գառները, լավ խնամքի գեպքում, շատ շուտ են  
հասնում, այդ ուղղությամբ յետ չխալով անգլիական մասրբդառու տե-  
սակի վոչխարներից: Ցգեյական տեսակի վոչխարի բրդի վորակը նույն-  
իսկ բարձր և անգլիական մասրբդառու տեսակի վոչխարների բրդից:  
Մրա հետ միասին նա շատ տոկուն և և վոչ այնքան պահանջկոտ կերի  
վերաբերմտմբ: Այս բոլորը ստիպում ե մեր կոլխոզներին ուշադրու-  
թյուն դարձնել վոչխարների այս տեսակե վրա, մանավանդ, վոր կոլ-

Խոզներուոմ հնարավոր և բազմացնել նրանց մեծ քանակությամբ և կաթն ողագործել պանիր պատրաստելու համար:

Մերինոսային վոչխարաբուծությունը: Մերինոսային վոչխարին հաս-  
կացվում են Սալսկի, Ստավրոպոլի և Թէրեքի շրջանների ամենաարևե-  
լյան ռայոնները, վորտեղ կլիմայական և հողային պայմանների հետե-  
վանքով դաշտաբուծությունը համարյա անհնարին ե: Մերինոսային  
վոչխարաբուծությունը ձեռնտու յե այն պայմանով, յեթե նա բազմաց-  
վի խոշոր հոտերով, վոչ պակաս, քան 1000 գլխից: Այդ պատճառով եւ  
նա առայժմ ամենամեծ զարգացում և ստացել հենց խոշոր կոմունանե-  
րում և կոռպերատիվային միություններում: Մերինոսային վոչխարա-  
բուծության հետագա զարգացումը ևս նույնպես լինելու յե միայն խո-  
շոր վոչխարաբուծական սովորագններում և կոլյառներում:

Մերինոսային վոչխարի ինկամտավորությունը հետևյալն է. բրդից (12 ֆունտի համար) 8 ռուբլի և գառան համար 15 ռուբլի, իսկ ընդամենը 23 ռուբլի, Մերինոսային վոչխարի ծախսը մի քիչ ավելի յի, քան վորակ այլ տեսակի վոչխարի ծախսը:

Հյուսիսային կովկասի չորային ռայոններում պեաք և անց կաց-  
նել տեսակի բարելավում՝ կոպտաբուրդ մաքիներին մերլնոսային դոչե-  
րի հետ բեղմնավորելու միջոցով։ Այս բանը չափազանց կարևոր է, վա-  
րովինեակ մերլնոսային վոշխարներ մեղ մոտ դեռ թիշ են։

Այդ ուսանոններում ամեն մի շնչին ընկնող հոգի շատոթյունը (շնչին ընկնում ե 10-12 հեկտար ցանքի համար սակավապետք հող) մեծ շահավետությամբ կարելի յե ոդտագործել հեսց սերինոսային և մետխային վոչխարաբուծության համար՝ վոչխարաբուծական սովորների և կոլյոդների կազմակերպման միջոցով և հատկացնելով շնչառող վոչխարաբուծության համար։ Մետխային վոչխարները կոպտաբրդային-ների հետ համեմատած, մեկ և կես անգամ ավելի բուրդ են տալիս և այդ բուրդը մեկ և կես, նույնիսկ յերկուանգտմ ավելի յե գնահատվում, այնպես, վոր մետխային վոչխարի բրդից ստացվող յեկամուտը յերեք անգամ ավելի յե, քան կոպտաբրդատու տեսակի։

## Ի՞նչպես կօգտել ՎՈՐԱՄԱՆԵՐԻ ՀԱՏՔ

Ցեղական փորձերով հաստատված և, վոր ավելի ձեռնտու յե վոչխարը պահել 1000-1200 մաքիներից բաղկացած հոտերով։ Այսպիսի հոտի համար անհրաժեշտ ե ունենալ 4 հոգի, 2 հոգի ոգնական և սե

սելվոր: Հոտի ամեն աեսակի կրծատումը ավելացնում ե հովիվսեր պահելու ծախսը՝ 1 վոչխարի հաշվով: Բնակավայրերից հեռու արածեցնելու և դաշտում գիշերելու դեպքում անհրաժեշտ և յերկու մարդուց վոչ պակաս, հիտեապես, ծախսերը մեծ հոտի ծախսերի զիմաց կրկնապատկվում են, Փոքր հոտի դեպքում շներ ևս ամեն մի հարյուրյակի համար պահանջվում ե ավելի:

Մերինսոսային վոչխարների բաղմացման դեպքում բոլոր արուները (դոչերը), բացառությամբ ցեղայինների, կրտվում են և թողնվում են միայն բուրդ ստանալու համար և միայն ներկա ժամանակ, նկատի ունենալով մեթիզացիայի համար մերինսոսային արտադրողների խոշոր պահանջը, բոլոր ցեղային դոչերին պիտի պահել ցեղավորելու համար։ Սովորական պայմաններում հոտում մինում ե 1000 գլխից 400-ը մաքի, 40 դոչ, 270 գլուխ կրտված, 290 գլուխ գառ։

Շուտ հասնող և մսաբրդառու վոչխարաբուծության դապիքում,  
նույնպես և մեր մսացու վոչխարների (Վոլոշակի և Կարաշյահի) բազմաց-  
ման զեաքում 7-8 ամսական վոչխարները և ծսած մաքիսների (յարոշնկ  
մի մասը մորթվում ե. այդ պատճառով հոտի մեջ կլիսն միայն մա-  
քիներ, ցեղային զոչեր և չծնոտ մաքիներ (յարկի) հոտի նորոգման հա-  
մար: 100 զլիից բազկացած հոտի մեջ պետք ե լիսի 75 մաքի, 20 շը  
ծնած մաքի և 5 դոչ:

Նույն կազմով պետք և լինեն սաև կաթոնային, կաթոնա-ուրիշային  
կարակուլ և ցգելական փոշնաբներից բաղկացած հոտերի համար:

Ի՞նչ ե ԱՐՎՈՒՄ ՎՈՇԽՄԱԲՈՒԺՈՒԹՅԵՆ ԼԵՎՈՅԵՆ  
ՀԱՄԱՐ

Մերինոսալին վոչխարաբուծությունը բազմացնելու և մեծ քանակությամբ նուրբ բուրդ ստանալու համար, կառավարության կողմից բացեն թողնվում հակայական միջոցներ՝ կոպտաբըրդատու վոչխաբներին մերինոսային դոչերի հետ մեթիզացիայի միջոցով բարելավելու, մանարինոսային դոչերի հետ մեթիզացիայի միջոցով բարելավելու, արևմելյան վոչխարաբանդ Սալսկի, Ստավրոպոլի և Թերեքի արշանների արևմելյան վոչխարաբուծական ռալուններում:

Մեթիզացման յենթարկվող գուշարների թիվը ամեն տարի կը բ-  
կայապատկվում է: Այսպես, որինակ, 1928 թվին մեթիզացված (բերման-  
վորված) ե 30 հազար դուչք, 1929 թվին՝ 60 հազար, իսկ, 1930 թվին

յենթագրվում ե մեթիզացման յենթարկել 120 հազար պլուխ:

Մեր մորթա-կաթնային վոչխարների մորթին (սմուշի) բարելավելու համար, ամեն տարի Թուրքեստանից Հյուսիսային Կովկաս և նեներմուծվում հարյուրներով կարակուլ ղոչեր և բաժանվում են աղնվամորթ վոչխարներ ունեցող կոլխոզների միջև։ Տեղական վորոշչին և կառաջայի վոչխարի բարեկավման համար, ամեն տարի կոլխոզների միջև բաժանվում են այդ տեսակների բարելավված ղոչերից ափելի, քան 1000 գլուխ և աարեց-տարի այդ քանակությունը կրկնապատկելու և յեռապատճելու թե՝ վոչխարների շուտ հասնումը և մսատվությունը յենթադրվում ե բարձրացնել արտասահմանից մսաբրդատու ղոչերի ներմուծման միջոցով։

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ, ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԸՎ  
ԽՆԱՄՔԸ

Վոչխարաբուծությունը կարող է յեկամտավոր լինել միայն այն ժամանակ, յեթե նա պահպատմ ե խողոր չափերով, համայնացված և յեթե պահպանվում են այն բոլոր կանոնները, վորոնք անհրաժեշտ են կերպարման, խնամքի և բազմացման համար։ Վոչխարների յեկամտավորությունը՝ բարձրացնելու համար պետք ե բարելավել տեսակը, իսկ դրա համար անհրաժեշտ է դոչերից հմուտ կերպով ընտրել ազնվացման համար, իսկ յեթի իրեն հոտում այդպիսիները չկան, պետք ե ուրիշ տեղի ձեռք բերել։ Լավ ազնվացեղ դոչը պետք ե նախ և առաջ խոշոր լինի, այսինքն, տվյալ տեսակի համար ունենա մեծ կենդանի, քաշ և սովորական դոչերի հետ համեմատած տա ավելի շատ բուրդ։ Մերին ասյին դոչը, բացի այդ, պետք ե ունենա բարձր վորակի բուրդ։

Ղավ ղոչերի համար անհրաժեշտ ե ընտրել նաև լավ մաքիսեր, վո-  
րով ետև բոլոր մաքիսերին նրանք բավարարել չեն կարող Այսպիսով  
անտեսության մեջ ստեղծվում ե սեփական աղնվացեղ հոտ, վորը և հե-  
տագայում կսկսի տալ աղնվացեղ ղոչեր:

Զահելներին անհրաժեշտ և լավ կերակրել։ Բացի լով խոտից, անհրաժեշտ և նաև ամեն մի գլխին որպական տալ մինչ 400 գրամ (1 փունտ) ուժեղ կերեր, ակսած այն ժամանակվանից, յերբ նրանք կարվում են իրենց մոր կաթից, նույնպես և ամբողջ ձմեռվա ընթացքում։ Ազնվացեղ դոչերին ևս հարաբերության թողնելուց մի ամիս առաջ և հարաբերության ժամանակվանից ամաժեշտ և կերակրել ուժեղ՝ կերերով, տալով

որական ամեն մի զիսին 800-ից մինչև 1200 գրամ (2-3 ֆունտ) կեր Ամենալավ կեր կարող ե ծառայել վարսակը: Մաքիներին ևս ծնելուց մի ամիս առաջ և հետո պետք է կերակրել ուժեղ կերերով, տալով որական ամեն մի պլահն մինչև 400 գրամ (1 ֆունտ) կեր:

Մերինոսային տեսակի ջահել մաքիներին և ջահել դոչերին պետք է հարաբերության թողնել շ և կես տարեկան հասակից վոչ շուտ, իսկ կոպատարուային տեսակներին՝ 1 և կես տարեկանից վոչ շուտ:

Վոչխարներին փարախ պետք ե միայն ձմեռվա համար, վորտեղ  
քշվում են նրանք գիշերները և վատ յեղանակներին: Ամբողջ ցերեկվա  
ընթացքում վոչխարները գտնվում են բացողյա բազաներում, վորտեղ  
և նրանք կերակրվում են, Փարախները սովորաբար կառուցվում են  
այսպես, 6-7 մետր յերկարություն ունեցող հաստ ձողեր են տնկում և  
վրան ծածկում են դամբշներով և ծղոտով: Ավելի լավ ե փարախը կա-  
ռուցել պատուհաններով և հսարավորին չափ ընդարձակ, վորպեսդի ա-  
մեն մի վոչխարին ընկնե վոչ պակաս 1 քառակուսի մետր տարածու-  
թյունից: Այդպիսի փարախում կարելի յե սուր զնել և վատ յեղանակ-  
ներին վոչխարներին այդտեղ կերակրել վոչխարներին ընդհանրապես  
պետք ե կերակրել միմիայն մասրբեց:

Զմեռը վոչխարի համար ամենալավ կեր և հանդիսանում խոտը, իսկ ամառը՝ արոտը: Սալսկի և Ստավրոպոլի շրջանների միջնաշերտերում մի վոչխարի համար պահանջվում ե 1 հեկտար արոտավելովում կարելի յի և արածեցնել և սնձել: Թերեքի շրջանի վատ հողերում պահանջվում ե 1 և կեսից մինչև 2 հեկտար: Սալսկի և Ստավրում պահանջվում ե 1 և կեսից մինչև 2 հեկտար: Սալսկի և Ստավրում պահանջվում ե 1 և կեսից մինչև 2 հեկտար:

Զորային շրջաններում, անբերիության դեպքում անհրաժեշտ է ունենալ սրբարձնակամ ծայրացեղ դեպքում կես տարվա պաշտու:

Ինչ զերաբերվում և աշխատանքի կազմակերպմանը և վարձատըրմանը վոչխաբարուծական կոլխոզներում, ապա վարձատըրությունը, ինչպես և անամնաբուծության այլ ճյուղերում պետք և նպաստի արտապես և անամնաբուծության այլ ճյուղերում պետք և նպաստի արտա-

պրաւնքի բարձրացմանն ու բարելավմանը և ինքնարժեքի իջեցմանը:  
Մի քանի կոլխոզներ արդեն մտցրել են աշխատանքի վարձատրության  
գործարքային ձև: Վարձատրությունը սահմանված է բրդի ցենաների և  
մինչև վորոշ հասակը մեծացրած գտան հաշվով: Բրդի վորակի բարե-  
լավման համար վարձատրությունը բարձրացվում է սահմանված կար-  
գով:

## ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՊԱԾՈՒՄԸ

Համարյա ամբողջ ըռւրդը և վոչխարների կեսը, վորը գնում ե  
վորպես մասցու, անցնում և անասնաբուծական կոռպերացիայի միջո-  
ցով։ Հետագայում նույն կոռպերացիայի միջոցով պետք և անցնի վոչ-  
խարաբուծության ամբողջ արտադրանքը։ Սա ուժեղ կերպով կոգնի կո-  
լեկտիվներին վարելու իրենց տնտեսությունը։ Զե՞ վոր կոռպերացիան  
ամեն ժամանակ կարող և ավանսներ բար թողնել կոնտրակտացիայի  
յենթարկված ըրդի, մսի, մորթու, աղնվացեղ մատերիալի համար, իսկ  
դրանով կոռպերացիան ոգնում և կոլխոզին ժամանակին կատարել աշ-  
վալ ճյուղի բարելավումը և ընդհանրապես վորեև ձեռնարկումներ կա-  
տարել այդ փողերով։ Կարիք յեղած դեպքում չե՞ վոր կոռպերացիան  
կարող և նպաստել կերեր, աղնվացեղ դոչեր և ալլն ձեռք բերելու։ Այդ  
պատճառով կոլխոզը պետք և գործնական կապ ունենա անասնաբուծա-  
կան կոռպերացիայի հետ, իր արտադրանքը սպառելու միջոցով։

ՎՈՐԱՄԱՐՍԻՆԻՖՈՒԹՅՈՒՆ ՅԵԿԱՄՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վոչխարհների տեսակները նկարագրելիս արդեն մատնանշեցինք, թե վոր վոչխարն ինչքան կարող է ընդհանուր յեկամուտ տալ: Վորպեսզի հաստատենք մեր ասածները, մեջ կրերենք Սալսկի շրջանի «Ստավրոպոլու» փոչխարաբուծական ընկերության յեկամուտը, վորը նա ստացել է 1929 թիվն:

Այդ ընկերությունը տարեվերջին ուներ 1360 գլուխ հասակավոր վոչխար և 630 գառ, վորոնցից 866 վոչխար և 361 գառը մերինոս տեսակի եղին, Մնացած վոչխարները Դրիմի ծագում ունեին: Այդ անտեսության աարեկան ծախար հետեւալին եր.—

Форвард . . . . . 2287 илл.

ԾԱԿՐ պահելու ծախս . . . . . 65 »

Շենքի պահպանման և ապահովագրության ծախսը . . . . .	85	»
Անասնաբուժական ոգնություն և բժշկական միջցներ . . . . .	802	»
<hr/>		
Հնդամենը . . . . .	3239	ռուբ.

Սրա դիմաց ստացվեց հետևյալ թեկամուտը.—

<i>Մերինոսային բուրդ</i>	3726	<i>կիլո</i>	7861	<i>ոռություն</i>
<i>1-ին տեսակի մետիսային բուրդ</i>	337	<i>»</i>	589	<i>»</i>
<i>2-րդ և 3-րդ տես. մետիս. բուրդ</i>	263	<i>»</i>	343	<i>»</i>
<i>Դրիմյան վոչխարների բուրդ</i>	200	<i>»</i>	280	<i>»</i>
			204	<i>»</i>
<i>Մորթի</i>	383	<i>կլ.</i>	7748	<i>»</i>
<i>Վոչխարներ</i>	109	<i>կիլո</i>	131	<i>»</i>
<i>Պանիր</i>				

Հնդամենը . . . 17715 ռուբլի.

Զուտ շահը, չնաշված աշխատանքի վարձատրությունը, հավասար  
ե 14 հազար 475 ռուբլու։ Քանի վոր այդ վոչիարաբուծական տնտե-  
սությունը պատկանում էր Կոռպերատիվային ընկերության և վոչ թե  
կոլխոզին, ապա վարձու աշխատանքի համար վճարված է 2855 ռուբլի։  
Այսպիսով մի վոչխարի զուտ յեկամուտը դուրս է գալիս 8 ռուբլի 62  
կոռպեր։ Մերինոսային վոչխարաբուծության այսպիսի յեկամտավորու-  
թյունը չի կարող իր վրա չդրավել կոլեկտիվ տնտեսությունների ուշա-  
գրությունը, վորոնք իրենց տրամադրության տակ ունեն համապատաս-  
խան արոտատեղիներ։

ՅԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յեթև անհատական չքավորա-միջակային տնտեսության մեջ հնարագոր չեր վոչխարաբուծությունը ճիշտ և յեկամաւագոր կերպով տանելու և այդ պատճառով վոչխարաբուծությունը սակավ յեկամուտ տը-վող զբաղմունք եր և նույնիսկ վոչ ձեռնտու, ապա խոչըր, կոլեկտիվ տնտեսություն կաղմակերպելու դեպքում, մանավանդ հատուկ վոչխարաբուծական տնտեսության կազմակերպման դեպքում, այդ ճյուղը կարաբուծական տնտեսության կազմակերպման դեպքում, այդ ճյուղը կարաբուծական տալ զգալի յեկամուտ, հնարավորություն տալով ոգտագործելու ըող և տալ զգալի յեկամուտ, հնարավորություն տալով ոգտագործելու ընթացքուներու:

Կարսորն այն ե, վորպեսզի հենց սկզբից վոչխարաբուծական կունակական տարածությունը դրվի ճիշտ ուղիների վրա:

## ԶԵՐԳԵՑՐԵՔ ԿՈԼԵԿՏԻՎ ԹԹՈՉՆԱԲՈՒԺՈՒԻ ԹՅՈՒՆԸ

### ԹԹՈՉՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ՆՁԵՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թռչնաբուժությունը մեզ մոտ գյուղատնտեսության ամենայետամնաց և «անապատան» ճյուղն եւ հանդիսանում է: Այնինչ նա հրակայական նշանակություն ունի: Արտասահման արտածվող մթերքների մեջ իր արժեքով թռչնաբուժությունը, թե պատերազմից առաջ և թե այժմ, բռնում եւ յերկրորդ տեղը:

Միջին հաշվով Հյուսիսային Կովկասում մի տնտեսությանն ընկնում ե 10 հավ, վորոնք տարեկան ածում են մոտ 60 հատ ձու: Գյուղացիական տնտեսության մեջ միջին հաշվով ընդամենը ստացվում է տարեկան մոտ 600 ձու: 1927-28 թվին հավաքած տեղեկությունների համաձայն, նրանցից մոտավորապես 480-ը սպառվում ե տնտեսության և յերկրի ներսում, իսկ մնացած 120 ձուն, կամ 2 հավի արտադրանքը արտահանվում է արտասահման: 1927-28 թվին Հյուսիսային Կովկասն ընդամենը տվել ե արտահանման համար 4 միլիոն 676 հազար ոուբլու ձու, վորը հավասար ե 3 հազար տրակտորի արժեքի: Սա ցույց է տալիս, թե ինչ հսկայական նշանակություն ունի թռչնաբուժությունը յերկրամասի ամբողջ ժողովրդական տնտեսության համար:

Սակայն թռչնաբուժությունը կարելի յե հեշտությամբ և զգալի չափով բարձրացնել: Բավական եւ հավի ածնությունը բարձրացնել ընդամենը միայն 10-12 ձվով, վորպեսզի արտածումը կը կնապատկվի:

Ամեն մի տնտեսության մեջ հավերի քանակությունը յերկուսով ավելացնելը նույնպես կարող ե կրկնապատկել արտածումը (եքսպորտ): Հյուսիսային Կովկասի բնական պայմանները միանդամայն բարենը-

պաստում են թռչնաբուժության լայն զարգացմանը և նրան մեծ ապագա յե պատկանում:

### ԲԱՐՁՐ, ՅԵԿԱՄՏԱՎՈՐ ԹԹՈՉՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱ- ԲԱՎՈՐ Ե ՄԻԱՅՆ ԿՈԼԽՈԶՈՒՄ

Թվում ե, թե ձուածանությունը 10-12 ձվով բարձրացնելը, կամ հայերի թիվը ավելացնելն այնքան ել մեծ բան չե: Սակայն դա շատ գժվարին խնդիր ե: Բանը նրանումն ե, վոր թռչնաբուժությունը առայժմ դեռ անհատական տնտեսության ճյուղ ե հանդիսանում: Իսկ կազմակերպել միջոցառումներ անհատական տնտեսությունների միջև թռչնաբուժության արտադրողականությունը բարձրացնելու համար, դա համարյա անհրագործելի խնդիր ե: Թռչնաբուժության արագ բարձրացումը հնարավոր է միայն կոնյեկտիվ տեսաւրյան մեջ: Ցավոք սրտի կոլխոզները մինչև այժմ ավելի քիչ թռչուն են պահում, քան անհատական տնտեսությունները և վոչ միայն չեն տալիս ապրանքային ավելցուկ, այլ նույնիսկ լիովին չեն բավարարում իրենց պահանջները: Կոլեկտիվները ևս, ինչպես անհատական տնտեսությունները, թունաբուժությունը համարում են ուշագրության վոչ արժանի ճյուղ: Այն հենց կոլեկտիվ թռչնաբուժությունը կարող ե տալ այնպիսի յեկամուտներ, վորոնց մասին անհատական տնտեսությունները լիրեն կայել անգամ չեն կարող:

Թռչնաբուժության մեջ հիմնական ծախսը, դա թռչնանոցի կառուցումն ե: Կառուցումները պահանջում են միաժամանակ լոոչոր ծախսեր, վորոնք հանգում են շատ դանդաղ, մի քանի տարվա ընթացքում: Հստ վորում, վարեան մեծ լինի բոչնանոցը, այնեան պակաս կինեն երա ծախսերը (մի հավի հաշվով):

Այսպես որինակ, 1000 գլխի համար կառուցված լավ թռչնանոցի գեղքում, մի հավին ընկնում ե 2-3 ոուբլի ծախս, 150-250 գլխի համար կառուցված հավաքնի ծախսը մի գլխին գալիս 4-7 ոուբլի, իսկ 50 գլխի համար մեկին ընկնում ե 8-12 ոուբլի: Ուրեմն, խոշոր իսկ 50 գլխի համար մեկին ընկնում են ավելի շուտ հանել կառուցման ծախս թռչնանոցում հավերը կարող են ավելի շուտ յեկամուտ: Բայց, խոշոր տնտեսություն մեջ ավելի մեծ շահ ե ստացվում թռչուններին խնամելուց: Մի մարդը աղատ կերպով կարող ե սպասարկել 1000 հավի: Յեթե գումար ենք ժամանակի ծախսումը 20-ական հավ ունեցող 50 տնտեսություն-

հավերի հավերի խնամքի վրա, աղա դա մի քանի անգամ ավելի դուրս կդա, քան մի մարդու ծախսած ժամանակը նույն քանակությամբ հավերի վրա, բայց խոշոր տնտեսության մեջ:

**Այլ** ջիւրի սպառումը ևս կոլեկտիվ տնտեսության մեջ ավելի հարմար է: Հավաքել 1000 ձու և մթերման կայանին հանձնել—շատ հեշտ է: Հավաքել նույն քանակությամբ ձու 100 անհատական տնտեսություններից—անհամեմատ գժիքը և և թանգ: Սրա համար արդեն պահանջվում է հատուկ մարդ, վորը հավաքի և վորին պիտի վճարել: Բացի այդ, անհատական տնտեսություններից այս կարգով ձու համարելու գեղքում կոտրավելն անխուսափելի յէ, իսկ կոլեկտիվ տընակության մեջ այդ բանն անհամեմատ քիչ կլինի: Հետո, կոլեկտիվում ձվերը ստացվում են ավելի միատեսակ իրենց վորակով, քան անհատական տնտեսություններում և այդ պատճառով ել հենց նրանք պահելի բարձր են գնահատվում:

Վերջապես, կոլեկտիվ տնտեսությունն ունի բոլոր հնարավորությունները կուտարական թունապահության համար, մի բան, վորը շատ գժիքը և ձեռք բերել անհատական տնտեսության մեջ: 100 անհատական տնտեսությունների միջև հազիվ մի 2-3 ը գտնվեն, վորոնք որինակելի թունաբռույժ լինեն, իսկ մնացածների մոտ զործը չափագանց վատ և զրված: Իսկ կոլխոզին մատչելի յէ ոգտագործվել մասնագետ թունաբռույժների և անասնաբռույժների ցուցմունքները և ոգոնությունը:

Ենորհիվ ար ցայտուն առավելությունների, կոլեկտիվ թունաբռությունը պետության կողմից արժանանում է հատուկ ուշադրության և ոգնության:

## ՃՇՈՐԵՆ ԸՆՏԵՑԵՔԵՐ ԹՐՉՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆ

Այս կամ այն թաշունի ընտրությունը կախված է կոլխոզի գիրքից, ծածր և խոնավ վայրերում հավեր պահել չարժի, վորովհետև այդ պամաններում յերեան չեն բերում իրենց մթերքատվությունը և հաճախ տառապում են հիվանդություններից: Սրան հակառակ՝ գետերի կամ լճերի ափերին հրաշալի կերպով կարելի յե սագեր և բարեր պահել: Հնդկահավերի համար շատ հարմար են դաշտային ընդարձակ տրամադրությունները:

Շատ հաճախ բնական պայմանները բարենպաստում են հավերի բաղմացմանը: Սրան պետք եւ ավելացնել և այն, վոր նրանց արժանագրը, ձուն, շատ մեծ պահանջ ունի: Այդ պատճառով, խոշոր կուլեկտիվ տնտեսությունը ձեռնտու յե կառուցել ձվային ուղղությամբ:

Վորովհետև ներկա ժամանակներում տեսակավոր հավեր քիչ կանաչ պատահ այն կոլխոզները, վորոնք ունեն այդպիսիները, պետք եւ ամեն կերպ զարգացնեն ազնվացեղ տեսակի հավերը, վորը շատ ձեռնտու յե տնտեսությանը:

Ի՞նչ տեսակի հավեր և վորովհ պահել: Հյուսիսային կովկասի պայմաններում ավելի ձեռնտու յեն հավերի նետեյալ տեսակները սպիտակ լեզորն և ոող-այլանդ: Առաջին տեսակի հավերը բացառիկ ձուածանությունն ունեն, իսկ յերկրորդ տեսակը, բացի ձուածանությունից, տարբերվում է նաև իր մսի լավ հատկությամբ: Պահն է համաձայն, Հյուսիսային կովկասում ոող-այլանդ տեսակի հավերը բաղմացվելու յեն Դոնեցկի, Շախտ-Դոնեցկի, մասամբ Դոնի և մասամբ Կուբանի շրջաններում: Հյուսիսային կովկասի մյուս շրջաններում նախագծված է լեզորն տեսակը զարգացնել: Պետք եւ պահել հավերի այն տեսակը ունետակ կողմանից լրացնելու համար: Տնտեսության մեջ հարկավոր եւ պահել միայն մի տեսակի հավ, վորպեսզի տեսակի այլասերում չառաջանա:

Բաղաբուծությունը նույնպես կարող ել լայն կերպով զարգացվել ինչպես հավաբուծությունը: Հիմնականում բաղաբուծությունը առաջիկա տարբիներում պետք երի ցեղային բնույթ: Վորոշ կոլխոզներ հնարավորություն ունեն բազմացնելու ահազին թվով սագեր, իսկ մյուսները հնդկահավեր: Հնդկահավերը և սագերը գարնանը և ամառնը կերակրվելով զրսում, հիանալի կերպով ոգտագործում են թափված հացահատիկները և մորթերուց առաջ համարյա կեր չեն պահանջում: Շատ ձեռնտու յե սագեր և հնդկահավեր պահել, տնտեսությունը մատվագետներու համար:

## ԹՐՉՈՒՄ ԿԱՐԻՔ Ե ԶԳՈՒՄ ԼԸՎ ԽՆԱՄՔԻ

Սովորաբար թունաների պահելու և խնամքի վրա շատ քիչ, ուշադրություն ե դարձվում: Թունանը կերակրվում է վատ և պահպան նեղ, մութ, կերպու և ցուրա շնչքում: Վատ խնամքը նպաստություն է համաձարակ հիվանդությունների ուժեղ զարգացմանը, վորոնք վնաս են հասցնում տնտեսությանը:

Շատ բացառիկ դեպքերում, թոչուններին թողնում են տեսակագործան առանց վորեն ընտրության, իսկ դրա պատճառով, լավ, արտադրանք տվող թոչունի հետ միասին բաղմացվում են նաև վատը: Բայց նորութիւն լավ թոչունը վատ պայմաններում չի կարող յերեան բերել: Եթ բնական բոլոր հատկությունները: Հետեւքար, վորպեսզի թոշունից ունենանք լավ յեկամուտ, հարկավոր ե վոչ միայն վոչ տեսակավոր թոչունը փոխարինել բարձր արտադրանք տվող տեսակավոր թոչունով, այլև տեսակավոր թոչունների միջից ցեղավորման համար թողնել միայն ամենամթերքառուն: Իսկ վորպեսզի նա կարողանա յերեան բերել իր բնածին հատկությունները, հարկավոր ե նրան դնել լավ պայմանների մեջ, միշտ կերակրել, պահպանել հիվանդություններից և պահել լավ շենքի մեջ:

Շենքը, թոչնանոցը պիտի ընդարձակ լինի, վորպեսզի թոչունն իրեն ճնշված չզգա: Ամեն մի հավին և բաղին պետք ե ընկնի վոչ ակաս 1 յերբորդ քառակուսի մետր տարածություն, իսկ սագին և հընդհանալին, վոչ պահաս մեկ քառակուսի մետրից: Թոչնանոցը պիտք ե լինի լուսավոր, տաք, մշտական թարմ ողով: Թոչնանոցը միշտ պետք ե պահել մաքուր և թույլ չտալ, վորպեսզի նրանում առաջանան թոչնային միջատներ: Թոչունը իր բնին ներկայացնում ե ավելի բարձր պահանջներ, քան ուրիշ կենդանիներ: Թեպետ այդպիսի թոչնանոցները ըստվականին թանգ արժեն, բայց ծախսը շուտով գուրս ե զալիս:

Վորպեսզի պաշտպանած լինենք թոչուններին հիվանդություններից, նախ և առաջ հարկավոր ենրանց մյուս կենդանիներից մեկուսացած պահել: Այս նպատակով, հավաքնի մոտ հավերի համար պիտի ցանկապատ քաշել, ցանելով այդ տարածությունը առվույտով և տնկելով պաղատը ծառեր: Այդ տարածությունը պետք ե ցանկապատել այնպես, վորպեսզի ամեն մի հավին ընկնի 10-13 քառտկուսի մետր տարածություն: Յեթե կոլխոզում կա այդի, կամ անտառ, ապա զա ամենալավ արտօն ե թոչունի համար: Այնտեղ թոչունը շատ կեր կդտնի, ինչպես որինակ—միջատներ, վորդեր և այլն և զրանով մեծ ոգուտ կտա տընտեսությանը, վոչնչացնելով միջատներին: Ցանկապատ քաշելու համար կարծիք յե յերկաթալար ցանց գնել, վորի մետրն արժեն 1 ոտքի: Շատ դեպքերում հնարավորություն կա տեղերում ավելի եժան ցանկապատ քաշել, Բադերի, սպերի և հնդկահավերի համար, վորոնք որն անց են կացնում բակից դուրս—ցանկապատած արտօններ պետք չեն:

Թոչնանոցի համար պահանջվելիք ծախսերից չպետք ե վախենալ:

Վոչ մի դեպքում չի կարելի թոչուն բազմացնել, յեթե նախորդոք չապահովենք նրան լավ շենքով: Այդպիսի սկզբնավորումից բացի վնասից և հիասթափությունից վոչինչ սպասել չի կարելի: Ճիշտ այդպիս և սըխալ կլինի վատ, թեկուզ և ժամանակավոր թոչնանոցի կառուցումը՝ ընկնելով եժանության յետելից:

Թոչունի, մթերքատվության պակասման կորուստները ավելի թանգ կնստեն, քան լավ թոչնանոցի կառուցումը: Թոչնանոցը կարելի յե կառուցել ուղած մատերիալից—դարմանից, ղամիշից, տախտակից, գերաններից, կավից և այլն: Այդ պատճառով պետք ե ընտրել այն մատերիալը, վորն ամենահեշտ կերպով կարելի յե ճարել տեղում և վորից կառուցելու դեպքում՝ եժան կնստի:

Թոչնանոցը կարելի յե կառուցել 250 գլխի համար՝ 4-5 մետր լայնությամբ, 13-21 մետր յերկարությամբ: Այսպիսի թոչնանոցը, թերեքի շրջանում, ծղոտից կառուցելու դեպքում նստում ե 5-7 ոուրլի ամեն մի գլխի համար: Ավելի խոշոր թոչնանոցների կառուցումը, մի հավի հաշվով նստում ե ավելի եժան, բայց դրա դիմաց միանվագ ծախսը կապահանջվի ավելի շատ: Իսկ ամենազիստը այն ե, վոր մեծ թոչնանոցներում թոչունը ուժեղ կերպով իջեցնում ե մթերքատվությունը և տալիս ե ավելի քիչ յեկամուտ, քան միջակ թոչնանոցներում: Թոչնանոցն անհրաժեշտ ե լավ կահավորել այնպես, վոր հարմար լինի հատակի ողտոտությունը լվանալ, փափուկ կերերի և ջրի (թեփ, ալյուր և այլն) համար ամաններ պատրաստել, թառ շինել Այս ամբողջ ինվենտարն աւնքան հասարակ ե, վոր կարելի յե շինել հենց կոլխոզնիկների ուժերով: Ջրամանը և կտամանն ավելի լավ ե անել այնպես, վոր իրենք գործեն (ավտոմատ), վորպեսզի կերը և շուրը միշտ թարմ լինի: Թոչնանոցի սարքավորումը կնստի մոտավորապես 50 կոպեկ ամեն մի հավի համար:

Հնդկահավանոցի արբավորումը կայտանում ե նրանում, վոր պետք ե շինել հատակ ունեցող թառեր, կերակրի և ջրի ամաններ: Սագերի և բագերի համար հարկավոր են կերակրի և ջրի հասարակ ամաններ: Սագերի, բագերի և հնդկահավերի շենքերի սարքավորումը այնքան հասարակ ե և եժան, վոր այն կարելի յե հաշվառման չընդունել:

Թոչնաբուծական տնտեսությունը լավ ե գարնանից հիմնադրել, ստանալով ինկուբատորից պատրաստի և միորյա ճուտեր: Այն գեղքում, յերբ ճտերը ինկուբատորից ստացվում են շոտ վաղ գարնանը, այդ եղքում նրանց հարկավոր և տեղավորել հավանոցային բրուկերի (բը-

բուդերը արհեստաշան թիսամեր ե, վորը տաքացվում և հատուկ վառարանով) տակ և անպայման չոր, մաքուր և լուսավոր շենքում: Այսուհետեւ, տաք որդերը սկսվելուց հետո, նրանց կարելի յե փոխազրել ելեվեղների մեջ (ելեվեղը—արհեստական թիսամեր ե, նման և արկղի և տաքացվում և լապտերով), ելեվեղը զրգում և բացովյա և ցանկության դեպում մի տեղից փոխազրելում և մի ուրիշ աեղ, ճաների համար հատուկ կառուցված տնակներում:

Յեթե ճուտերը դուրս են գալիս՝ արդենուշ զարնանը, յերբ յեղանակներն արդեն տաք են, նրանց անմիջապես կարելի յե տեղազորել ելեվեղում: Այդպիսի դեպքերում ճուտերի համար հատուկ շենք կառուցելու կարիք չկա: Բրուդերը 300-500 ճուտերի համար, նստում և մոտավորապես 50-75 ոռորի: 75 ճափի համար ելեվեղ կարելի յե սեփական ուժերով շինել, վորը կնստի վոչ թանգ 25 ոռորուց:

Այսպիսով, սկսելով թուչնաբուծության զարգացումը ճուտերի դաստիարակումից, կողեկտիվը վոչ միայն յոլա կերթա նախնական, վոչ խոշոր ծախսերով, այլ և ժամանակ կունենա, վորպեսզի առանց շտապելու կառուցի լավ թուչնացներ:

## ՊԵՏՔ Ե ԾԻՇՏ ԿԵՐԱԿԻՆ ԹԱՅՉՈՒՆԵՐԻՆ

Ինչպիս ճուտերին, նույնպես և հավերին կարելի յե ապահովել կերպով: Ճուտերին կերպակը համար անհրաժեշտ և ունինալ ձավար, ցորենի թեփ, դարու և վարսակի ալյուր, ծհծած հատիկ, խոշոր ավաղ, փայտի ածուխ և վոր առանձնապես կարենը ե, սերը քաշած կաթ և թարմ պանիր (տվորող):

Հասակավոր թուչունին կերակրելու համար հարկավոր և ունինալ զանազան կերերի հավաքածու—ցորենի տականք, յեղիպտացորեն, սորդո, կորեկ, գարի, վարսակ, ցորենի թեփ, դարու և յեղիպտացորենի ալյուր, տակ, առվույտի թիեր: Անհրաժեշտ և, հատկապես ձմեռը, տալ թարմ պանիր, մածուն, իսկ յեթե հնարավորություն կա, պիտի տալ մսի կտորներ և ծհծած գումոր, ամեն մի զլիքին 10-20 զլրամ: Հարկավոր և տալ նույնապես զաջ:

Նայած հավի մեծությանը, մի տարի կերակրելու համար հարկավոր և 25-45 կիլոգրամ հացահատիկային և փափուկ կեր (թեփ, ալյուր): Վառեկների կերակրման համար 3-4 անգամ պակաս կեր և պահանջվում:

Թեթև տեսակի հավերն ավելի քիչ կեր են պահանջում, քան ծանր տեսակները: Բացի այդ, լավ արոտը ևս ուժեղ կերպով կրմատում և կերի պահանջը: Թուչունների կերակրումն եժանացնելու նպատակով, թուչուններին ամառը հարկավոր և հանել դաշտ, շարժական տնակներում:

Բաղերի համար փափուկ կեր (թեփ, ալյուր) պահանջվում և տարեկան 30-80 կիլոգրամ: Սագերը և հնդկահավերը պահանջում են կերակրել միայն ձմեռը, վաղ գարնանը և ուշ աշնանը: Ամբողջ ամառը և շունը սագերը և հնդկահավերը արածում են և հատուկ կերակրման կարիք չեն զգում: Բայց սագի և հնդկահավի ճուտերին առաջին 2-3 ամիսը պիտք է կերակրել:

Բացի հիշվոծ ուժեղ կերերից, շատ ցանկալի կերեր են—տակը, կերի ձմեռուկը և առվույտի թիերը, վորոնք հանդիսանում են հրաշալի և մինույն ժամանակ եթան կերեց: Թուչնաբուծական տնտեսությունը կերերով ապահովելու համար, պետք և ցանքային պլանում նախատեսնել այս կերերի պահանջը:

Թուչնաբուծությունը հանդիսանում և գյուղատնտեսության ամենաշխատանք պահանջող ճյուղերից մեկը: Թուչնաբուծության մեջ աշխատանքը կայանում և նրանում, վոր շենքը և ինվենտարը պիտի մաքրել կուտա ու ջուր տալ, միջատների գեծ կովել, հետեւ լթոչունների վարքին և առողջությանը, մաքրել թառերը և պաշտպանել գիշատիչ թուչուններից: Ցոլոր թուչուններից հավաք ամենաշատ խնամք և պահանջում: Միծ ուշագրություն և խնամք են պահանջում հնդկահավի ճուտերը, մինչև վոր նրանց վզի և գլխի վրա առաջանում են կորալներ: Հասակավոր հնդկահավին պետք և միայն հետեւ: Շատ քիչ հոգս են պահանջում բագերը և ավելի քիչ՝ սագերը: Սկզբնական շրջանում, քանի զեր կոլխոզիները փորձ չունեն, ամեն մի մարդու նորմալ ըեռացածությունը պետք և համարել մի թուչնանց 250 հավերով և նույն քանակությամբ հնդկահավերով: Սագեր և բաղեր կարելի յե տալ յերկու անգամ ավելի:

Թուչնաբուծությունը պահանջում է գիտություն և փորձառություն: Այդ պատճառով անհրաժեշտ ե, վորպեսզի ամեն մի կոլխոզում թուչուններին խնամեյին մրյեվնույն մարդիկ: Կազմակերպելով թուչնաբուծական ճյուղը, կոլխոզը պետք և զրա համար առանձնացնի հարկ յեղած քանակությամբ մշտական մարդիկ, ուղարկի նրան թուչնաբուծական դասընթացքները պատրաստվելու համար և այն ժամանակ՝ արդեն հանձնարի նրանց այդ գործը տանել:



Թոշնաբուծությունը կարիք չի զգում փիղիք սկան ուժի, պահանջում ե ուշադրություն: Այդ պատճառով այստեղ հաջողությամբ կարելի յե ոգտագործել վոչ միայն կնոջ աշխատանքը, այլ և անչափահասների և հաշմանդամների աշխատանքը:

Աշխատանքի վարձարությունը պետք ե լինի այնպես, վոր շահագրգոհի թոշնաբուծությամբ զբաղվող անձանց: Այդ նպատակով կարելի յե սահմանել պրեմիաներ, թոշունների մթերքատվությունը ընդունված նորմայի հանդեպ բարձրացնելու համար: Դա կարող ե վերաբերվել ինչպես հավերի ձուածանությանը, նույնպես և վառեկների լավաձեցմանը:

Հնդհանուր առմամբ թոշնաբուծությունը շատ ձեռնտույե կոլխոզին և շատ կարեւոր ե պետության համար: Այդ պատճառով, նա պետք է զարգացվի ամեն կոլխոզում յեվ անելի մեծ ուշադրության արժանանա, քան մինչեւ այժմ:

## Վ. Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Գրքի 1-ին յերեսում, անվան տակ տպված ե՝ «բարգմ. Պ. Մ. յեվ Հ. Մ.» պիտի լինի՝ «Պ. Մ. յեվ Հ. Ա.»:

9-րդ եջում. վերենից 11-րդ տողամ տպված ե՝ «միք», պիտի լինի՝ «միք»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0295893

ԳԻԱԸ 15 ԿՈՊ.

53153

21679

---

ИЗДАНИЕ  
СЕВ.-КАВ. КРАЕВ. ОТДЕЛЕНИЯ  
ЦЕНТРОИЗДАТА

---